

ԲԱՆԲԵՐ ՄԱՏԵՆԱԴԱՐԱՆԻ

ISSN 1829-054X



Matenadaran
Mesrop Mashtots Institute of Ancient Manuscripts
and “Friends of the Matenadaran” Benevolent Fund express their
gratitude to “JTI ARMENIA” CJSC
for sponsoring the publication of this volume

Մատենադարան
Մեսրոպ Մաշտոցի անվան հին ձեռագրերի ինստիտուտը և
«Մատենադարանի բարեկամներ» բարեգործական հիմնադրամը
երախտագիտություն են հայտնում «ՋԵՅ ԹԻ ԱՅ ԱՐՄԵՆԻԱ» ՓԲԸ-ին
սույն հատորի հրատարակությանն աջակցելու համար



MATENADARAN
MESROP MASHTOTS INSTITUTE OF ANCIENT MANUSCRIPTS

BULLETIN OF MATENADARAN
35

Yerevan – 2023

МАТЕНАДАРАН
ИНСТИТУТ ДРЕВНИХ РУКОПИСЕЙ ИМЕНИ МЕСРОПА МАШТОЦА

ВЕСТНИК МАТЕНАДАРАНА
35

Ереван – 2023

ՄԱՏԵՆԱԴԱՐԱՆ
ՄԵՍՐՈՊ ՄԱՇՏՈՑԻ ԱՆՎԱՆ ՀԻՆ ՁԵՌԱԳՐԵՐԻ ԻՆՍՏԻՏՈՒՏ

**ԲԱՆԲԵՐ
ՄԱՏԵՆԱԴԱՐԱՆԻ**

35

*Տպագրվում է Մեսրոպ Մաշտոցի անվան
Մատենադարանի գիտական խորհրդի որոշմամբ*

*Խմբագրական խորհուրդ՝ Գոհար Մուրադյան (գլխավոր խմբագիր), Վահան Տեր-
Ղևոնդյան, Կարեն Մաթևոսյան, Օլգա Վարդազարյան, Վահե Թորոսյան, Թեո վան
Լինտ, Արմեն Մովսեֆյան, Արտաշես Շահնազարյան, Գուրգեն Գասպարյան,
Արուսյակ Թամրազյան, Հայկ Համբարձումյան:*

*«Բանբեր Մատենադարանի» 35, Մեսրոպ Մաշտոցի անվան հին ձեռագրերի
ին-տ. Երևան, 2023, 320 էջ (ներդիր 8 էջ):*

ՄԱՏԵՆԱԳԻՏՈՒԹՅՈՒՆ
BIBLIOGRAPHY
БИБЛИОГРАФИЯ

ԳՒՆՐԳ ՏԷՐ-ՎԱՐԴԱՆԵԱՆ*

DOI: 10.57155/TYFJ4933

ՄԱՇՏՈՑԵԱՆ ՄԱՏԵՆԱԳՐԱՐԱՆԻ ՁԵՌԱԳՐԱԿԱՆ
ՀԱԲԱՔԱԾՈՒՆԵՐԸ
(Ժողովման պատմության համառոտ ուրուագիծ)

Բանալի բառեր՝ Ձեռագիր, պատառիկ, էջմիածին, հավաքածու, հայերէն, արաբատառ, այլալեզու, նուիրատուներ:

Մեր ձեռագրական ամէն՝ յատկապէս խոշոր ու նշանակալի հաւաքածու իր գոյացման վայրի, պայմանների, առանձնայատկութիւնների ու նպատակագրումների համեմատ ունի ուրոյն՝ ուրիշներից տարբերուող նկարագիր ու կերպարանք: Բոլորի՝ այս տեսակէտից ունեցած պատկերն այստեղ ներկայացնելու տեղը չէ, սակայն Մաշտոցեան Մատենադարանի հետ համեմատելու համար պարտաւոր ենք բնորոշելու մէկը: Այսպէս, Վենետիկի Մխիթարեան ձեռագրական հաւաքածուն մի բառով կարելի է կոչել «ընտիր» կամ «ընտրովի», որովհետեւ միաբանութիւնը սերնդէսերունդ ծրագրուած եղանակով փնտրել, գտել եւ ստացել կամ ընդօրինակելով ձեռք է բերել այն, ինչ պէտք է եղել իր ընթացիկ կամ հեռանկարային գիտական, կրթական, մշակութային ու լուսաւորական խնդիրների իրագործման համար, ձգտել եւ ունեցել է որեւէ երկի՝ միայն իր ունեցածից աւելի լաւ օրինակը¹: Սրա մօտ եւ սրա համեմատ, իր գոյացման տեղի ու պայմանների թելադրանքով՝ Երեւանի Մաշտոցեան Մատենադարանի հաւաքածուն բնորոշելի է «Համընդգրկուն» բառով, որ լիովին բնական ու օրինաչափ

* Մեսրոպ Մաշտոցի անվան Մատենադարան, պ.գ.դ. ներկայացնելու օրը՝ դեկտեմբերի 20, 2022, հոդվածը գրախոսելու օրը՝ 25 մայիսի, 2023:

¹ Ծրագրուած այդ փաղափականութեան առանձին դրուագներն ու մանրամասն պատկերը տե՛ս Մայր ցուցակ հայերէն ձեռագրաց Մատենադարանին Մխիթարեանց ի Վենետիկ, հտ. Գ-Է., յօրինեց Հ. Սահակ վրդ. Ճեմճեմեան, Վենետիկ-Ս. Ղազար, 1993-1996, էջ Ա-ԽԷ., Ա-ԺԸ., Ա-ՁԱ., Ա-ԺԳ.: Հմմտ. արժեքատու վաւերագրերը հետեւեալ հատորի՝ Մայր դիւան Մխիթարեանց Վենետիկ ի Ս. Ղազար, 1707-1773. Ի ծագմանէ ուխտիս մինչեւ ցրածանունն թրեստեան հարց, հրատ. Հ. Ղեւոնդ Տայեան, Վենետիկ, 1930:

է. լինելով նախ Ամենայն Հայոց հայրապետանիստ վանքի, ապա՝ հայոց պետականութեան գիտա-մշակութային կարեւորագոյն մի հաստատութիւն, տեղագրուած լինելով ամբողջ հայութեան հաւաքատեղիում կամ հայեացքի կիզակէտում՝ այստեղ ժողովուրդը կամ ստացուել է եղած եւ առաջարկուած ամէն ինչը: Սրանով էլ Մատենադարանն ամփոփել է հայկական ձեռագրական ժառանգութեան պահպանուած եւ մեզ հասած շուրջ 31.000 միւլտրի² մէկ երրորդից աւելին, որի՝ արդէն քանակով պայմանաւորուած որակը շունի հայերէն ձեռագրերի որեւէ այլ հաւաքածու:

Այսպիսով, Մաշտոցեան Մատենադարանը հայերէն ձեռագրերի աշխարհում մեծագոյն կենտրոնատեղին կամ հայերէն հին ձեռագրեր՝ միջնադարեան հայկական գրական մշակոյթի յուշարձաններ եւ նրանց առնչուող թանկարժէք, տարաբնոյթ նիւթեր պահպանող, հետազոտող ու ցուցադրող հաստատութիւն է: Այստեղ գտնուող աւելի քան 22.738 ձեռագրական միւլտրների մէջ, հայերէնից բացի, կան յունարէն, լատինատառ, սլաւոններէն, արաբերէն, պարսկերէն, թուրքերէն, ասորերէն, եբրայերէն, եթովպերէն, հնդկերէն, չինարէն, ճապոներէն եւ այլ լեզուներով բացառիկ արժէքի նիւթեր: Մատենադարանն ունի նաեւ ԺԶ-Ի դարերի՝ Հայաստանի եւ նրա հեռաւոր ու մերձաւոր դրկից երկրների պատմութեանն ու մշակոյթին վերաբերող շուրջ 500.000 դիւանական փաստաթուղթ, հայագիտական բազմալեզու գրականութիւն ամփոփող, լաւ կազմակերպուած գրադարան, ԺԸ-Ի դարերի հայկական (որոշ չափով նաեւ օտարալեզու) գիտական բնոյթի մամուլի լաւ հաւաքածու: Տասնեակ առաջնակարգ մասնագէտների ջանքերով ապահովուում է այս բոլոր արժէքաւոր հաւաքածուների լաւագոյն խնամքը, պահպանութիւնն ու օգտագործումը, այլեւ՝ վնասուած միւլտրների կեանքի տեսականացումը: Հայկական եւ համաշխարհային մշակոյթին վերաբերող այս թանկ ժառանգութեան ինքնատիպութեան ու կարեւորութեան համեմատ՝ 1998 թ. Մատենադարանն ընդգրկուել է ԻՒՆԵՍԿՈ-յի «Աշխարհի յիշողութիւն» շարքի եւ ծրագրի մէջ:

Հաւաքածուների գոյացման մասին խօսելուց առաջ պարտաւոր ենք շատ համառօտ ուրուագծելու Մատենադարանի պատմութիւնը³, որն սկսւում է Ե. դ. սկզբին՝ հայերէն գրերի գիւտից (405 թ.) անմիջապէս յետոյ: Հայոց Վասմշա-

² Այս թիւը վերաբերում է կաշէկազմի մէջ ամփոփուած գրման ամբողջական մատեաններին. ձեռագրական պատառիկներով եւ այլալեզու ձեռագրերով հանդերձ Մատենադարանի ունեցած միջնադարեան արժէքների քանակներն աւելի մեծ են, որոնց մասին տե՛ս ստորեւ:

³ Ժամանակին Լեւոն Խաչիկեանը գրել է Մատենադարան-հաստատութեան ձեւաւորման պատմութիւնը. տե՛ս **Լեւոն Խաչիկեան**, «Մատենադարանը անցելով եւ սովետական իշխանութեան տարիներին», *ԲՄ*, 4, 1958, Երեւան, էջ 7-23. հմմտ. **Լեւոն Խաչիկեան**, «Հայկական ՍՍՌ Մինիստրների Սովետին առընթեր գիտահետազոտական ինստիտուտ Մատենադարանը», *ՊՐՀ*, 2-3, 1959, էջ 375-388:

պուն թագաւորի եւ Սահակ Պարթեւ կաթողիկոսի հովանաւորութեամբ ու գործուն աշակցութեամբ Մեսրոպ Մաշտոց վարդապետը ստեղծեց հայերէնի 38 տառանոց այբուբենը (փոքր՝ 2 գրի յաւելումով լիարժէք գործում է նաեւ այժմ), ապա նրանք եւ իրենց հետեւորդները ժամանակի Հայաստանի քաղաքական ու հոգեւոր մայրաքաղաք Վաղարշապատում (էջմիածին) սկսեցին ասորերէնից ու յունարէնից հայերէն թարգմանել Աստուածաշունչը եւ քրիստոնէական կարեւորագոյն գրականութիւնը: Հայ եկեղեցու կանոնականացրած՝ սրբացրած երրորդութեան (Ս. Մեսրոպ, Ս. Սահակ, Ս. Վռամշապուհ) գիւտը՝ հայերէնի այբուբենի եւ հայ-քրիստոնէական գրականութեան ստեղծումն ունէր քրիստոնէութիւնն ու այն կրող ժողովուրդների մշակոյթը հայերէնացնելու եւ հայացնելու նպատակ, որին նրանք հասան մեծագոյն յաջողութեամբ: Սրան զուգահեռ՝ երկրում ստեղծեցին ուսումնական եւ գիտական լայն ու հզօր մի ցանց, որ է՛լ իրենց օրօք, է՛լ իրենց յաջորդող գրեթէ բոլոր դարերում, ուսումն ու գիտութիւնն անբաժանելի եւ օտարալեզու արժէքը հայերէնացնելն ու հայերէն արժէք ստեղծելը նոյնաբնոյթ համարելով, Հայաստանում եւ աշխարհի հայաբնակ բոլոր վայրերում ստեղծեցին ՀԱՅ ԳՐԱԿԱՆ ՄՇԱԿՈՅԹ անգնահատելի գանձարանը, որն ունի երկու մեծ ճիւղ՝ ինքնուրոյն եւ թարգմանական, որոնցից այսօր սնոււմ է քաղաքակիրթ գրեթէ ողջ աշխարհը: Այս ամբողջի ստեղծման ու կառավարման կենտրոնը՝ իր ունեցած դաւանաբանական, ծիսական, ուսումնական, գիտական եւ այլ նպատակադրումներով ու որդեգրած սկզբունքներով, գրեթէ միշտ եղել է Հայոց կաթողիկոսարանը. ուստի եւ գրերի գիւտից անմիջապէս յետոյ Վաղարշապատում հիմնադրուել է Հայոց կաթողիկոսարանի գրադարան-Մատենադարանը, որ սկզբից եւեթ հայերէնի հետ ունէր նաեւ ասորերէն ու յունարէն ձեռագիր գրքեր: Այս նոյն գրադարան-Մատենադարանն էլ իր մէջ ամփոփել է եւ ներկայ Հայաստանի Մաշտոցեան Մատենադարանին ժառանգել աշխարհում պահպանուած հայերէն միջնադարեան շուրջ 31.000 ձեռագիր գրքերի զգալի մասը. մնացած մասը՝ Երուսաղէմի, Վենետիկի, Վիեննայի, Նոր-Ջուղայի (Սպահան՝ Պարսկաստան), Սանկտ Պետերբուրգի, Փարիզի, Լոնդոնի, Բեռլինի եւ Եւրոպայի ու Ամերիկայի հայկական եւ ոչ հայկական մշակութային ու գրադարանային կենտրոններում է. ճիշտ իր ստեղծող հայ ժողովրդի նման, մի մասը Հայաստանում է, միւսը՝ օտար երկրներում:

Հայաստանի հետագայ դարերի պատմութեան վայրիվերումների հետ Մատենադարանը կաթողիկոսարանի հետ միասին շրջում էր տեղից տեղ եւ ունեցաւ 10 կամ արեւի հանգրուաններ, որոնց շարքում էին Բագրատունեաց Հայաստանի Անի վաճառաշահ մայրաքաղաքը, ժամանակ անց՝ Կիլիկեան Հայաստանի մայրաքաղաք Սիսը, որտեղից էլ 1441 թ. վերադարձաւ իր սկզբնաւորման տեղը՝ Վաղարշապատ: Այստեղ կաթողիկոսարանը եւ իր մատենադարանը ենթարկուեցին Ժե-ԺԸ. դարերի թուրք-պարսկական, ապա՝ ԺԹ. դարի առաջին երեսնամեա-

կի ռուս-թուրքական եւ ռուս-պարսկական պատերազմների արհաւիրքներին ու նրանց՝ անխուսափելիորէն պատճառած կորուստներին, որոշ բարուընթացում եւ ծաղկում ապրեցին ցարական Ռուսաստանի տիրապետութեան շրջանում, իսկ Հայաստանի խորհրդայնացումից յետոյ՝ 1921 թ., Հայ եկեղեցուն պատկանող այլ արժէքների հետ միասին՝ Մատենադարանը պետականացուեց, նրա հիմքի վրայ ստեղծուեց Խորհրդային Հայաստանի առաջին գիտական կազմակերպութիւնը՝ Հայաստանի գիտական ինստիտուտը, որը յետոյ ստացաւ գրադարանային հիմնարկի կերպարանք եւ կոչուեց Հայաստանի Պետական Զեռագրատուն-Մատենադարան: Քանի որ այդ ժամանակ երկրի մայրաքաղաք Երեւանը դարձել էր նրա գիտական, ուսումնական եւ մշակութային կեանքի կենտրոնը, ուստի կառավարութեան վճռով Մատենադարանը 1939 թ. տեղափոխուեց Երեւան եւ գործում էր Հայաստանի Ազգային գրադարանի շէնքում, միաժամանակ սկսուեց նրա համար յատուկ շէնքի նախագծումն ու կառուցումը, որ աւարտուեց եւ սկսեց գործածուել 1959 թ.: Նոյն թուականին էլ Հայաստանի կառավարութեան որոշմամբ Մատենադարանը ստացաւ հետազոտական հաստատութեան ներկայիս իր բնոյթը, 1962 թ. կոչուեց հայերէն այբուբենի հեղինակ Մեսրոպ Մաշտոցի անունով եւ բազմակողմանի գործառնոյթ ունեցող գիտական հաստատութեան իր նոր նկարագրով ստեղծեց գիտա-մշակութային բազմաթիւ ու տարատեսակ արժէքներ: 2011 թուականին բուն շէնքին կից կառուցուեց նոր, ընդարձակ աշխատանքային-գրապահոցային շէնք, որի հետ միասին Մատենադարանի գործառնոյթներն աւելի ընդարձակուեցին, իսկ բուն շէնքը դարձաւ թանգարանային մաս, որ նախկին մէկի փոխարէն ունի տասներկու ցուցասրահ, որոնցում առաւել համակողմանի է ներկայացուում հայկական ձեռագրական-գրական մշակոյթը:

Նախընթաց շարադրանքը թուուցիկ մի ուրուագիծ է, որի ուղենիշերով հաստատութեան անգամ համառօտ պատմութիւնը վերարտադրելը հնարաւոր է հարիւրաւոր էջերով, ուստի գանք մեր բուն խնդրին եւ ընդհանուր գծերով պատկերենք Մատենադարանի ձեռագրական հաւաքածուների գոյացման միայն կարեւորագոյն դրուագները, երբեմն բերելով վիճակագրական որոշ տուեալներ:

Մատենադարանի բնոյթի հաստատութիւնների էութիւնն ու արժէքը պայմանաւորուած են նրանց ունեցած հաւաքածուների պարունակութեամբ, այլեւ՝ գոյացման ընթացքով: Այստեղ կան համարական առանձին շարքերով պահպանուող՝ Հայերէն, Արաբատառ եւ Այլալեզու (լատինատառ եւ այլ) հիմնական (ամբողջական) եւ մասնական (պատառիկներ եւ այլ տեսակներ) հաւաքածուներ, որոնց ժողովումը եղել է Հայաստանի պատմութեան տարբեր շրջաններին շատ յատկանշական, երբեմն զգայացուցիչ դրուագներով: Մատենադարանի ձեռագրական հաւաքածուների գոյացման պատմութիւնը, ամէն մէկը իւրովի, շարադ-

րել են Օնիկ Եգանեանն⁴ ու Ասատուր Մնացականեանը⁵: Ընդհանրացնելով Օ. Եգանեանի հմուտ-փաստալի ուսումնասիրութեան եւ Ա. Մնացականեանի գնահատումների արդիւնքները, նրանց բաւական ընդարձակ գրուածքների համեմատ մեր հաւաքածուների համալրումների ընթացքն այստեղ պատկերել ենք հնարաւոր ամփոփ շարագրանքով եւ նոր շեշտագրումներով: Այլեւ՝ նոյն համալրումների պատմութիւնը շարունակել եւ հասցրել ենք մեր օրերին եւ ուղենշել ապագայ որոշ անելիքներ:

Գոյացման աղբիւրների տեսակէտից համալրումների պատմութեան մէջ նկատում ու բնորոշում ենք հետեւեալ ութ հիմնական շրջանները, որոնցից առաջին վեցն այստեղ ներկայացնում ենք առաւելապէս ըստ տուեալների Հայերէն ամբողջական ձեռագրերի հաւաքածուի⁶, որ 2022 թ. նոյեմբերի վերջի դրութեամբ ունի 11.363 միւտուր:

1. Ամենայն Հայոց կաթողիկոսութեան գահանիստ վանքի աւանդոյթով եւ ինքնաբերաբար գոյացած՝ «Էջմիածնի հին հաւաքածուն»,

2. Գէորգ Դ. կաթողիկոսի (1866-1882) եւ նրա հետետորդների՝ մշակութային զարթոնքի ժամանակաշրջանի հետետողական ժողովում՝ «Գէորգեան հաւաքածու»,

3. Արեւելեան Հայաստանի եւ Էջմիածնապատկան լայնածաւալ թեմերի վանական, եկեղեցական ու անհատական հաւաքածուների եւ միատրոնների ժողովում՝ 1893-1915 թթ.,

4. Արեւմտեան Հայաստանի, յատկապէս՝ Վասպուրականի ու Տարօնի հաւաքածուների փրկում, որ Վանի յայտնի ինքնապաշտպանութեան մշակութային կարեւոր արդիւնքներից մէկն էր,

⁴ Օնիկ Եգանեան, «Մատենադարանի ձեռագրական հաւաքածուները», *Յուցակ ձեռագրաց Մաշտոցի անուան Մատենադարանի*, հտ. Ա., կազմեցին՝ Օ. Եգանեան, Ա. Զէյթունեան, Փ. Անթաթեան, ներածութիւնը՝ Օ. Եգանեանի, խմբագրութեամբ Լ. Խաչիկեանի, Ա. Մնացականեանի, Երևան, Հայկական ՍՍՌ ԳԱ հրատ., 1965, սիւն. 13-214 (ամբողջ հատորը՝ 1634 սիւն). այստեղ ներկայացնուած է սկզբից մինչեւ 1962 թ. ստացումների պատկերը (այսուհետեւ յիշատակելու ենք՝ 32, Ա. համառոտումով): 1963-1968 թթ. յատկումները պատկերուած են նոյնական վերնագրով յաջորդում՝ հտ. Բ., Յանկերը եւ համեմատական տախտակները՝ Օ. Եգանեանի, Երևան, 1970, էջ 1537-1546 (ամբողջը՝ 1546 սիւն): 1969-1998 թ. ստացումների պատկերն էլ տես *Յուցակ ձեռագրաց Մաշտոցի անուան Մատենադարանի*, կազմեց՝ Ա. Մալխասեան, խմբագրութեամբ՝ Ա. Տէր-Ստեփանեանի, հտ. Գ., Երևան, Երևանի համալսարանի հրատ., 2007, 250 էջ, էջ 7-26:

⁵ Ա. Մնացականեան, «Ներածութիւն», *Մայր ցուցակ հայերէն ձեռագրաց Մաշտոցի անուան Մատենադարանի*, հտ. Ա., կազմեցին՝ Օ. Եգանեան, Ա. Զէյթունեան, Փ. Անթաթեան, խմբագրութեամբ Ա. Մնացականեանի, Օ. Եգանեանի, Երևան, Հայկական ՍՍՌ ԳԱ հրատ., 1984, էջ Ե-ԾԳ. (ամբողջը՝ ԾԳ. էջ, 1472 սիւն). այսուհետեւ յիշատակելու ենք՝ Մ3, Ա. համառոտումով:

⁶ Օ. Եգանեանի 1695ի ուսումնասիրութիւնից բացի, միւս զբերում արժարժուած է միայն այս հաւաքածուն:

5. Պետականացուած Մատենադարանի սկզբնական շրջանի համալրումներ. 1922-1940 թթ.:

Այստեղ ուրուագծուած՝ 2-5-րդ շրջանների՝ 1866-1940 թթ. ընթացքում վերը յիշատակուած տարածքների ձեռագրական «հաւաքածուներից շատերը, գետ ու վտակների նման, ի վերջոյ հոսեցին դէպի Էջմիածին եւ դարձան նրա ընդհանուր հարստութեան բաղկացուցիչը»⁷:

Սա է պատմական նախապայմանների այն ամբողջութիւնը, որոնց հետեւեանքով մեր երկիրը, տարբերուելով քաղաքակիրթ աշխարհի ընդհանուր աւանդոյթից, ձեռագիր գիրքը տպագրի հետ միասին երկրի գլխաւոր՝ Ազգային գրադարանում պահելու փոխարէն, միջնադարեան ձեռագրական ժառանգութեան պահպանման եւ հետագոտման համար ստեղծել է յատուկ հաստատութիւն՝ հին ձեռագրերի ինստիտուտ-Մատենադարան⁸:

6. Այլ կազմակերպութիւններից փոխանցումների, սեփական ձեռագրական եւ դիւանական հաւաքածուների կանոնաւորման եւ մէկից միւսը տեղափոխելու, գնումների ու նուիրատուութիւնների եղանակով համալրման շրջան՝ 1941-1962 թթ.,

7. Համալրման համահայկական կամ աշխարհասփիւռ ընդգրկման շրջան. 1965-1991 թթ.: Վայրիվերումներով շարունակուել է մինչեւ Խորհրդային Միութեան փլուզումը եւ Հայաստանի անկախացումը,

8. Ներկայիս՝ Հայաստանի անկախութեան շրջանը:

Այժմ ներկայացնենք համալրման թուարկուած շրջանների առաւել նշանակալի դրուագները:

Ա. ԿԱԹՈՂԻԿՈՍԱՐԱՆԻ ԵՒ ԻՐ ԴՊՐՈՑԻ ՄԱՏԵՆԱԴԱՐԱՆ

Գրերի գիւտից անմիջապէս յետոյ Սուրբ գիրքը եւ ընդհանրապէս քրիստոնէական գրականութիւնը թարգմանելու համար նախ Մաշտոցի, ապա իր աշակերտների ձեռքով Ամիրդից, Եղեսիայից ու Սամոսատից, յետոյ՝ նաեւ Աթէնքից եւ Արեքսանդրիայից ասորերէն եւ յունարէն շատ գրքեր էին բերուել Վաղարշապատ, որոնք մեծ մասամբ մնացել էին այստեղ, ուստի Ե. դ. առաջին կէսին Վաղարշապատի մատենադարանը պէտք է ունենար ասորերէն, յունարէն եւ հայերէն ձեռագիր գրքերի բաւական ճոխ գրադարան: Այդ է վկայում նոյն դարի պատմիչ Ղազար Փարպեցին, որ 483 թուականից Էջմիածնի վանահայր էր, իսկ այդ պաշտօնը թողնելուց յետոյ, դարավերջին Վահան Մամիկոնեան իշխանին գրել է. «Զի անգամ եւ գհոռոմ գրեանդ ո՛չ ետուն զկնի իմ. որք կան այդր ընկե-

⁷ ՄՅ, Ա., էջ ԺԳ.:

⁸ Անկասկած, մերինի նմանողութեամբ են ստեղծուել Վրաստանի, Թուրքմենիայի եւ Ադրբեջանի «Ձեռագրերի ինստիտուտները»:

ցեալ ի կերակուր ցեցոյ. բայց արդեաւք կարգացեալ լուսաւորիցի⁹ն ի դոցանէ բնակեալդ ի տեղւոջդ, եւ կամ զայս լուսաւորիցե⁹ն»⁹:

Այս փաստի առիթով յիշենք, որ միջնադարում եւս եղել են կրթութեան տարբեր տեսակ-մակարդակներ, եւ ամէն տեսակի դպրոց ունեցել է իր բնոյթին համապատասխանող գրադարան. բարձրագոյնը եղել է Վարդապետական կրթութիւնը¹⁰, որ համարժէք էր ներկայիս համալսարանականին եւ տեւում էր միջինը 7 տարի: Այս դպրոցները գործում էին եկեղեցական կարեւոր կենտրոններում՝ կաթողիկոսարանում եւ թեմերի առաջնորդարաններում, համբաւաւոր ուսուցիչների՝ «րաբունապետների» գլխաւորած համալսարաններում, որոնց շրջանաւարտները ստանում էին գաւազան-վկայական եւ քարոզելու իրաւունք-պարտաւորութիւն: Այս վարդապետարաններին կից միշտ կային հարուստ գրադարաններ, որոնք ունէին քրիստոնէութեան ուսմունքին, ծէսին եւ բոլոր գիտութիւններին վերաբերող գրականութիւն: Մեր եկեղեցու կենտրոն կաթողիկոսարանը միշտ ունեցել է այդպիսի հարստագոյն գրադարան, որի հիմքի վրայ էլ, ինչպէս շարադրանքիս սկզբում ասուեց, առաջացել է ներկայիս Մաշտոցեան Մատենադարանը:

Հայոց կաթողիկոսարանի Մատենադարանի վաղ շրջանի պատմութեանը վերաբերող ցրիւ տեղեկութիւնները ժողովելը եւ նրա գոնէ ուրուագծային պատմութիւնը հիւսելը մերձաւոր ապագայում անելիք աշխատանք է: 1441 թ. էջմիածնում կաթողիկոսութեան վերահաստատուելուն յաջորդող շրջանին վերաբերող տեղեկութիւններ եւս առայժմ չկան. միայն գիտենք, որ քաղաքական աննպաստ պայմաններով հանդերձ՝ եկեղեցական-վանական շարունակական կեանք կար, ուրեմն՝ կար նաեւ մատենադարան: Յայտնի են միայն ժէ-ժԸ. դդ. եւ ժԹ. դ. սկզբի փաստերի կցկտուր արձանագրումներ, որոնցից յիշենք մի քանիսը. Մովսէս Տաթեւացի նորոգող կաթողիկոսը (1629-1633 թթ.) եւ իր հետեւորդներն աշխուժացրին եկեղեցական-ուսումնական կեանքը, որի համար աւելի նպաստաւոր պայմաններ առաջացան 1639 թ. թուրք-պարսկական հաշտութեան կնքումից եւ տեւական խաղաղութեան հաստատումից յետոյ: Սրա շնոր-

⁹ Մատենագիրք հայոց, հտ. Բ., Ե. դար, Անթիլիաս-Լիբանան, տպ. Կաթողիկոսութեան Հայոց Մեծի Տանն Կիլիկիոյ, 2003, էջ 2388:

¹⁰ Կային նաեւ առանձին (հրապիրովի ուսուցիչներն ազնուականների զաւակներին կրթում էին նրանց տանը), տարրական (ստանում էին կիրառական գիտելիքներ՝ գրահանաչութիւն եւ թուաբանութիւն), քահանայական՝ տեսում էր չորս տարի (սերտում էին քրիստոնէական ուսմունքին վերաբերող կարեւորագոյն գիտելիքները, ստանում էին ծէսի հիմնաւոր իմացութիւն). առաջինների դէպքում ենթադրելի է սովորողների ճաշակին համապատասխան գրադարան, իսկ քահանաներն ու եկեղեցիներն ունենում էին ծիսական առնուազն 15-20 գիրք, երբեմն՝ տարաբնոյթ այլ գրքեր: Առ այս մանրամասներ տես Վարդան վ. Հացունի, *Դաստիարակութիւնը հին հայոց քով*, Վենետիկ, տպ. Ս. Ղազար, 1923:

հիւ է, որ այսօր Մատենադարանում կայ ժէ. դ. ընթացքում էջմիածնում գրուած 57 եւ ժԼ. դ. ընթացքում գրուած 144 ձեռագիր: Յայտնի է նաեւ, որ 1662 թ. էջմիածնում կար «Ներսէս գրքապան» (ՄՄ ձեռ. 110, 467բ), այսինքն՝ պաշտօնեայ գրադարանավար կամ մատենադարանապետ: Սիմէոն Երեւանցի կաթողիկոսը (1763-1780) էջմիածնի վարժարանում ժԼ. դ. կէսերի իր ուսումնառութեան շրջանի մասին պատմել է՝ «Նա եւ ո՛չ տային, ասէր, դպրաց կամ սարկաւագաց զբաւական գրեանս, այլ երից կամ շորիցն զգիրք մի տուեալ, տաժանմամբ ուսանէին ըստ ամենայնի» (ՄՄ ձեռ. 2766, էջ 34ա): 1795 թ. սեպտեմբերին Թիֆլիսում Աղայ Մահմադ խանի հրոսակները «կապտեալ կողոպտեցին, ընդ որս եւ զվեց սայլ զարդս սուրբ Աթոռոյն էջմիածնի. զարբութեանց սրբութեան անօթս պղծութեանց պղծութեան արարեալ գործիս» (ՄՄ ձեռ. 2766, էջ 55ա). այս անօթների մէջ կային նաեւ շատ կարեւոր ձեռագրեր: ԺԹ. դ. սկզբի ուս-թուրք-պարսկական հակամարտութիւնների, սրանց հետեւանք՝ էջմիածնի կաթողիկոսական աթոռի համար «Դաւիթ-Դանիէլեան» կոչուած պաշքարի հետեւանքով էջմիածինը մեծ կորուստներ կրեց. 1804 թ. Դաւիթ բռնակալ կաթողիկոսը վանքի կարեւորագոյն արժէքները տեղափոխել է Երեւանի բերդ, բազմաթիւ արժէքաւոր մատեաններով հանդերձ, որոնք այլեւս ետ չեն վերադարձուել: Նոյն 1804 թ. ուսական գեներալ Յիցիանովի բանակը նահանջեց, հետները Թիֆլիս տարան բազմաթիւ արժէքներ, նրանցից յետոյ պարսիկները մինչեւ վերջին թելը կողոպտել են էջմիածինը, նաեւ ձեռագրեր, որոնք յետոյ Թաւրիզի հրապարակներում վաճառքի են հանուել «բեռներով եւ հազարներով»: Այս բոլորն անվերադարձ կորուստներ են եղել. վկայ՝ այդ տարիներին Թաւրիզի շուկաներում նպարավաճառներն իրենց պարանքը փաթաթում էին հայերէն ձեռագրերի թերթերի մէջ:

Համեմատաբար խաղաղ տարիների ընթացքում՝ եփրեմ կաթողիկոսի օրօք (1809-1827), թէ՛ ցրուած ձեռագրեր են հաւաքում եւ թէ՛ նորերն են ձեռք բերում, ըստ ամենայնի՝ յատուկ պաշտօնեայ գրքապահի ձեռքով «Գիրքս Սրբոյ էջմիածնի է. 1813» կնքով գրոշմում մատեանները: Սրանից յետոյ, ինչպէս յայտնի է, երբ 1828 թ. Մանուէլ Կիւմուշխանեցի վարդապետը Գրիմից եկել է էջմիածին, այստեղ տեսել է 1809 ձեռագիր: Նա կարգաւորել է մատենադարանը. ձեռագրերը համարակալուել են, արձանագրուել «տոմարի»՝ գոյքամատեանի մէջ, գրուել են ձեռագրերի համառօտ բովանդակութիւնները եւ փակցուել նրանց կազմերի կողերին. այդ առաջին գոյքամատեանում կար. Աստուածաշունչ՝ 1-25, Աւետարան՝ 1-88, Յայսմաւորք՝ 1-13, Այլեւայլ մատեանք՝ 1-1608 (այս վերջինները հիմնականում գիտական բովանդակութեամբ ձեռագրերն էին) եւ այլն: Նոյն ժամանակ արձանագրուել է 2856 կտոր տպագիր գիրք. կանոնակարգուել

է Ձեռագրատան աշխատանքը. առաջին կանոնն էր՝ ձեռագրերը դուրս չտալ եւ գրանով կանխել նրանց հնարաւոր կորուստը¹¹:

Այնուհետեւ՝ 1828-1837 թթ. ետ վերադարձուել, հաւաքուել կամ ձեռք է բերուել 931 ձեռագիր, որով՝ 1837 թ. Մատենադարանում կար 2740 ձեռագիր եւ 2298 տպագիր գիրք: 1838 թ. Յովհաննէս վ. Շահխաթունեանը եւ Յովհաննէս վ. Ղրիմեցին հապշտապ կազմեցին մի ցուցակ, որի ուսերէն եւ ֆրանսերէն տարբերակը Մարի Իրոսէն 1840 թ. տպեց Ս. Պետերբուրգում¹². սրա մէջ բովանդակային-տեսակային դասակարգմամբ, ձեռագիր եւ տպագիր (խառն) նկարագրուած է 655 միւսուր գիրք: Սրա հիմնական արժանիքը՝ էջմիածնի ձեռագրերի առաջին տպագիր ցուցակը լինելն է:

Մատենադարանի կարգաւորումը, Շամախիից, Թիֆլիսից եւ այլ տեղերից ձեռագրերի ժողովումը եւ ներքին օգտագործման համար նախատեսուած գրացուցակների կազմումը շարունակուել է նաեւ հետագայ տարիներին: Այդ աշխատանքների շարքում նշանակալի է եղել 1848 թ. Շամբի Ս. Ստեփանոս Նախավկայի վանքից (Մաղարդավանք) 69 ձեռագիր էջմիածին բերելը, որ իրականացել է ներսէս Ե. Աշտարակեցի կաթողիկոսի (1843-1857) կարգադրութեամբ, Յովհաննէս վ. Շահխաթունեանի եւ Մակար վ. Տէր-Պետրոսեանի (ապագայ Մակար Ա. Թեղուտեցի կաթողիկոս՝ 1884-1891) ջանքերով: Այս ձեռքբերումը նշանակալի էր նրանով, որ բերուածների մէջ էր նաեւ Ձ. դարի փղոսկրէ կազմով, նոյն դարի շորս մանրանկար ունեցող, 989 թ. գրուած եւ նկարազարդուած նշանաւոր «էջմիածնի Աւետարանը» (ՄՄ ձեռ. 2374)¹³: Ուշագրաւ է, որ Սիւնիքի Բղենոյ Նորավանքում ստեղծուած այս բացառիկ մատենանը Ստեփանոս Նախավկայի վանքում յայտնուել է 1173 թ., եւ ըստ ամենայնի մէկն է այն 10.000 ձեռագրերից, որ ըստ պատմագիր Ստեփանոս Օրբէլեանի հաղորդման՝ 1170 թ. Բաղաբերդը գրաւելուց յետոյ սելջուկները աշխարհով մէկ «ցանուցիր» արեցին:

Կարեւոր է նաեւ յիշելը, որ Մովսէս Գ. կաթողիկոս Տաթևացի (1629-1633 թթ.) Յովհաննավանքում հիմնադրել է վանական մի դպրոց, որի գործունէութեան արդիւնք՝ ԺԱ-ԺԸ. դարերի մի քանի տասնեակ արժէքաւոր ձեռագիր, մտել է ներկայիս մեր հաւաքածուի մէջ:

¹¹ Յայտնի է, որ Մանուէլ վ. Կիւմուշխանեցին նոյն տարիներին կարգաւորել է նաեւ Սեւանի վանքի մատենադարանը, ապա, ըստ տասնեակ ձեռագրերի մէջ առկայ յիշատակագրութիւնների՝ իր սեփական եւ իր ուսուցիչ Յովհաննէս վ. Գրիգորեանին պատկանած ձեռագրերի մի մեծ ֆանակ նուիրել է Մոսկուայում հաստատուած Լազարեան հետազոտման ընթացակարգին:

¹² М. И. Броссе, *Каталогъ книгамъ Эчмядзинской библиотеки, Catalogue de la bibliothèque d'Edchmiadzin*, Санктпетербург: тип. Имп. Акад. наук, 1840, [4], 121 с.

¹³ 1848 թ. այդ վանքի ո՛չ բոլոր ձեռագրերն են էջմիածին բերուել. 1904 թ. այնտեղ դեռեւս կար 124 մատենան, որոնցից 69ը 1922ին Թարիզի վրայով բերուել են Մատենադարան, մնացեալ 55ը կորսուած են:

Դանիէլ վ. Շահնազարեանցը, միջնադարի գրացուցակների աւանդույթն իր ժամանակի պատկերացումների հետ համադրած սկզբունքներով, 1862 թ. կազմել է էջմիածնի մատենադարանի ձեռագրերի մի ցուցակ, որ 1863 թ. Թիֆլիսում հրատարակուել է Յակոբ Կարենեանի մեկենասութեամբ: Այս ցուցակում 1-2331 համարների ներքոյ 2338 ձեռագիր նկարագրուած է այնպիսի սկզբունքներով, որ դրանցով ճանաչում ենք նոյն՝ Մաշտոցեան Մատենադարանում ներկայումս եւս պահպանուող ձեռագրերը: Նաեւ՝ այս ցուցակն աւելի քան մէկ դար շատ կարեւոր դեր կատարեց, որովհետեւ մինչեւ 1965 թ. ձեռագրերն այս ցուցակով էին գիտական գրականութեան մէջ յիշատակուած կամ օգտագործուած:

Այսուհանդերձ, 1837 թ. էջմիածնում կար 2740 ձեռագիր, իսկ 1863ին հրատարակուած ցուցակում, չհաշուելով անցած 26 տարուայ ընթացքում աւելացածները, կար 2338 միաւոր՝ պակաս 402ով, որոնք անփոյթ վերաբերմունքի պատճառով ցիրուցան էին արուել¹⁴:

1863-1867 թթ. էջմիածնում ժողովուել է Դանիէլ վարդապետի ցուցակում չնկարագրուած եւս 45 ձեռագիր, որոնցով հանդերձ 1867ին էջմիածնում կար 2383 ձեռագիր:

Բ. ԳԷՈՐԳ ՉՈՐՐՈՐԳ ԿԱԹՈՂԻԿՈՍԻ ՇՐՋԱՆԻ ՀԱՄԱՐՈՒԾՆԵՐԸ ԵՒ «ԳԷՈՐԳԵԱՆ ՀԱՒԱՔԱԾՈՒ»Ն

Գէորգ Գ. կաթողիկոսի (1866-1882) ջանքերի շնորհիւ հայ եկեղեցին բարեկարգուել եւ լիովին համահունչ է դարձել իր ժամանակի պահանջներին, նա մեծապէս նպաստել է նաեւ ժողովրդի կրթական ու լուսաւորական մակարդակի բարձրացմանը, որի կարեւորագոյն գրսեւորումը հաստատումն էր էջմիածնի «Գէորգեան ճեմարանի», որ ըստ էութեան ներկայ Հայաստանի տարածքում բարձրագոյն կրթութիւն տուող միակ հաստատութիւնն էր: Վերջինիս հոգեւորական եւ աշխարհական ուսուցիչների ու աշակերտների ընթերցողական կարիքները բաւարարելու եւ ընդհանրապէս Մայր Աթոռի գիտական զարգացումն ապահովելու համար էլ կաթողիկոսն էապէս բարեկարգեց Մատենադարանը եւ նպաստեց ձեռագիր ու տպագիր գրքերով այն համալրելու գործին:

1866 թ. մայիսին նա էջմիածնում կաթողիկոս օծուեց. հոգեւորական եւ աշխարհական տարբեր անհատներ օժման հանդէսի աւարտին նրան նուիրեցին ձեռագրեր, որոնցով սկզբնաւորուեց մի նոր ժողովածու, որ յետոյ իր իսկ անունով կոչուեց «Գէորգեան հաւաքածու»: Սրա մէջ նոյն կաթողիկոսի օրօք հաւաքուեց 331 ձեռագիր, իսկ ընդհանրապէս՝ 1866-1909 թթ. ընթացքում, 1372 ձեռագիր, որ եւ այս հաւաքածուի ամբողջութիւնն էր:

¹⁴ Նկատենք, որ այդ տարիներին ձեռագիր գրերը գործածուած էին տպագիրներին զուգահեռ, նաեւ տպագրերի նման՝ մատենադարանից ազատ ելումուտով, որ ինքնին նրանց կորստի հիմնական պատճառն էր:

Այս քանակի մէջ զգալի էր անձամբ իր՝ կաթողիկոսի նուիրած ձեռագրերի թիւը՝ 53 միաւոր (նաեւ՝ 120 տպագիր գիրք): Շատ արժէքաւոր էր նաեւ Կարինի եւ Վիրահայոց առաջնորդ Կարապետ արքեպիսկոպոս Բագրատունու հաւաքածուն՝ 91 ձեռագիր, որ թէկուզ նրա մահից (1856 թ.) յետոյ Մատենադարան մտաւ միայն 1881 թ., բայց այս առիթով Գէորգ Դ. կաթողիկոսը վերականգնեց եւ ուսական իշխանութիւններին հաստատել տուեց մեր եկեղեցու հնաւանդ այն սովորութիւնը, ըստ որի կուսակրօն հոգեւորականի մահից յետոյ նրա ունեցուածքը ժառանգում է իր միաբանած վանքը: Այս կարգի համաձայն՝ հետագայ տարիներին շատ կրօնաւորներ իրենց ձեռագրերը նուիրեցին Մատենադարանին, իսկ Կարապետ Բագրատունու հաւաքածուն գոյացել էր Արեւմտեան Հայաստանի տարբեր վանքերից ձեռք բերուած եզակի արժէք ունեցող միաւորներից, օրինակ՝ թղթի վրայ գրուած հայերէն հնագոյն՝ 981 թ. ձեռագիրը (Հ^մ 2679), Մովսէս Խորենացու Պատմութեան հնագոյն ամբողջական օրինակը (Հ^մ 2865) եւ այլն:

1868 թ. այստեղ են մտել նաեւ մեզ արդէն յայտնի ցուցակի հեղինակ Դանիէլ եպս. Շահնազարեանի գրքերը՝ 69 ձեռագիր, 110 տպագիր: Նոյնպէս եւ՝ 1879 թ. ստացուել է տարբեր վանքերից ու եկեղեցիներից Սարգիս արքեպս. Զալալեանի հաւաքած 81 ձեռագիր, նաեւ՝ 1880 թ. Պետերբուրգում վախճանուած Եփրեմ վ. Ալթունեանի 30 ձեռագիրը:

1893-1909 թթ. Մատենադարանը հարստացել է 572 ձեռագրով. սրանցով հանդերձ՝ Գէորգեան հաւաքածուն ունեցաւ 1354 ձեռագիր, իսկ Մատենադարանը՝ 3737: 1910 թ. ստացուած 25 ձեռագրով (20ը Հառիճի վանքից) հանդերձ Գէորգեան հաւաքածուն ամփոփեց 1379, իսկ մատենադարանը՝ 3762 ձեռագիր:

Սրանց մէջ են Մկրտիչ Խրիմեան կաթողիկոսին (1892-1907 թթ.) պատկանած 76 ձեռագրերը, 1893 թ. Արիստակէս եպս. Սեդրակեանի ձեռքով հիմնականում Նախիջեւանի գաւառից բերուած 21 ընտիր ձեռագրերը, 1897 թ. Սահակ վ. Ամատունու՝ Նուխիից էջմիածին բերած 26 ձեռագիրը, ապա 1904 թ. բերուել է նաեւ Սանահնի վանքի հաւաքածուն՝ 31 միաւոր, նոյն թուականին ստացուել են նաեւ Արշակ Տէր-Միքէլեանի 16 ձեռագրերը, 1905 թ.՝ հրապարակախօս Աբգար Յովհաննիսեանի հաւաքածուն՝ 21 միաւոր, իսկ 1907 թ. մատենադարանապետ Մեսրոպ վ. Տէր-Մովսիսեանը Գէորգեան ճեմարանից մատենադարան է տեղափոխել 57 ձեռագիր: Փոքրաքանակ այլ նուիրատուութիւններ են ստացուել Մեսրոպ Տէր-Մովսիսեանից (1896 թ.), Գիւտ քհն Աղանեանցից (1897 թ.), Գալուստ Տէր-Մկրտչեանից (1898-1906 թթ.), Թէոդորոս Շիրակունուց (1898 թ.), Կարապետ Եզեանից (1906 թ.) եւ ուրիշներից:

Եղել են նաեւ աւելի փոքրաքանակ նուիրատուութիւններ եւ ձեռքբերումներ, որոնց մեծ մասի ծագումն այժմ յայտնի չէ: Բայց հաւաքածուն շարունակել է համալրուել նաեւ յաջորդ տարիներին՝ 1882-1909 թթ., եւ 1891 թ. այն ամփո-

փում էր 782 ձեռագիր, իսկ Մատենադարանն ընդհանրապէս՝ 3165 մատեան: Յիշատակելի են. բժիշկ Գաբրիէլ Յովհաննիսեանի (Քաջբերունի) նուէրը՝ 24 ձեռագիր (1885 թ.), Աստրախանի երկսեռ ուսումնարանի հաւաքածուն՝ 118 միաւոր (1888 թ.), նաեւ՝ Մեսրոպ արք. Սմբատեանից ստացուած 24 ձեռագիր:

Գ. ՀԱՄԱԼՐՈՒՄ ԱՐԵՒԵԼԵԱՆ ՀԱՅԱՍՏԱՆԻ ԹԵՄԵՐԻՑ ԿԱՄ 1910-1915 ԹԹ. ՀԱԻԱՔԱԾՈՒՆ

Մատենադարանի ձեռագրական հաւաքածուների հարստացման եւ, յատկապէս, հարիւրաւոր ձեռագրեր համաշխարհային ապագայ պատերազմի վտանգներից ու հաւանական կորստից փրկելու առումով շատ կարեւոր նշանակութիւն ունեցաւ Մատթէոս Բ. Իգմիրլեան կաթողիկոսի (1908-1910) 1909 թ. հոկտեմբերի 21ի շրջաբերական կոնդակը, որով Վրաստանի, Բեսարաբիայի, Շամախիի, Արցախի, Աստրախանի, Ատրպատականի եւ Երեւանի առաջնորդներին ու հոգեւորականներին յորդորում էր իրենց թեմերի վանքերի ու եկեղեցիների հնութիւններն ու ձեռագրերը յանձնել Մայր Աթոռի Մատենադարան ու Թանգարան եւ դիմացը ստանալ տպագիր գրքեր ու հարկաւոր այլ նիւթեր¹⁵: Այս կոնդակն առթուած էր ժամանակի էջմիածնական հոգեւորական եւ աշխահական մտաւորականների, յատկապէս՝ նոյն տարիների մատենադարանապետ Մեսրոպ եպս. Տէր-Մովսիսեանի մտահոգութեամբ:

Այս ընթացքում ժողովուրեց 911 ձեռագիր, որոնցով 1915 թ. փետրուարի սկզբին Մատենադարանն ունէր 4660 ձեռագիր: Այսպէս՝

1903 թ. Խաչիկ վ. Դադեանը Մատենադարանին նուիրեց տարբեր տեղերից իր հաւաքած 132 հայերէն եւ 30 արաբատառ ձեռագիր.

1911 թ. Մատենադարան են բերուել Արտազի Թադէոս առաքեալի վանքի (Մակու քաղաքի մօտ) ձեռագրերը՝ 74 միաւոր.

1911 թ. նոյեմբերին ստացուել են Սեւանի վանքի 105 ձեռագրերը (իսկ ընդհանրապէս այժմ Մատենադարանում են այս վանքից եկած 120 ձեռագիր).

1911 թ. ուղարկուել եւ 1913 թ. էջմիածին են հասել Թաւրիզից, Խոյից, Սալմաստից եւ Մուժամբար գիւղից Կարապետ եպս. Տէր-Մկրտչեանի հաւաքած 145 ձեռագիր.

1911-1912 թթ. ընթացքում բերուել են Տաթեւի վանքի 140 ձեռագրերը.

1910 թ.՝ Գանձակից եւ Ղարադաղից՝ 12ական ձեռագիր: Այսուհանդերձ, 1910-1915 թթ. ստացուած ձեռագրերից 183ի նախկին պատկանելութիւնն առայժմ անորոշ է:

Շատ կարեւոր իրադարձութիւն էր 1908-1911 թթ. մատենադարանապետ Մեսրոպ եպս. Տէր-Մովսիսեանի նախաձեռնութեամբ եւ ջանադիր հսկողու-

¹⁵ 32, Ա., սիւն. 63-92:

թեամբ, Դաւիթ Աւան-Իւզբաշեանի միջոցներով եւ ճարտարապետ Պօղոս Զոհրաբեանի նախագծով Մատենադարանի համար էջմիածնում յատուկ շէնքի կառուցումը: Իսկ սա հնարաւորութիւն տուեց անելու յաջորդ անհրաժեշտ քայլը:

1913 թ. առաջ էջմիածնի հիմնական, Գէորգեան եւ 1910 թ. յետոյ ստացուած փոքր հաւաքածուները պահպանուած էին իրարից առանձին: Ձեռագրերի տարբեր եւ յաճախ միանման համարներ ունենալը շփոթների եւ անյարմարութիւնների պատճառ էր դառնում: Ուստի 1913 թ. փետրուարին նոյն մատենադարանապետը բոլոր հաւաքածուները միաւորեց եւ ձեռագրերին նշանակեց ընդհանուր-շարունակական՝ 1-4586 համարներ: Ապա 1913 թ. մարտից 1915 թ. յունուար ընթացքում տարբեր աղբիւրներից ստացուած 74 մատենանով հանդերձ Մատենադարանն ունեցաւ 1-4660 ձեռագիր:

Ակտուած համաշխարհային պատերազմի հնարաւոր վտանգներից զերծ պահելու համար այս 4660 հայերէն, տարիների ընթացքում հաւաքուած 218 արաբատառ ձեռագրերը եւ եկեղեցական առաւել արժէքաւոր որոշ իրեր 1915 թ. փետրուարի 3ին, 140 սնդուկների մէջ դրուած, ուղարկուեցին Մոսկուա, որտեղ հայոց Վերացման Ս. Խաչ եկեղեցում պահպանուեցին մինչեւ 1922 թ. ապրիլի 5ը:

Գ. ՎԱՍՊՈՒՐԱԿԱՆԻ, ՏԱՐՕՆԻ ԵՒ

ՄՇՈՅ ԶԵՆԱԿՐԱԿԱՆ ՀԱՒԱՔԱԾՈՒՆԵՐԻ ՓՐԿՈՒՄԸ

Ըստ Օնիկ Եգանեանի հետազոտութեան՝ համաշխարհային առաջին պատերազմի սկզբում՝ 1915-1916 թթ. ընթացքում կազմակերպուած եղանակով, իսկ հետագայում պատահական ձեռքբերումների ձեւով, Վասպուրականից էջմիածին է բերուել եւ այսօր Մաշտոցեան Մատենադարանում պահպանուած է 1473 ձեռագիր. այս թուի մասերն են՝ Աղթամարի վանքից 285, Լիմ անապատից 306, Վարազայ վանքից 345, Կոտուց անապատից 202, Վան քաղաքի եւ շրջակայ գիւղերի եկեղեցիներից 335 (20ն արաբատառ)¹⁶: Սրանց փրկութեան համար պարտական ենք հիմնականում Լիմ անապատի վերջին վանահայր Յովհաննէս վարդապետ Հիւսեանին, որը հաղորդում է, թէ ինքն անձամբ էջմիածին է բերել «1410» ձեռագիր, նաեւ ձեռագրեր է ուղարկել ուրիշների միջոցով. «Չանկալեան գաւթանի միջոցաւ՝ 400» եւ «Գարատօշեան Սահակի՝ 260»: Այս վերջին առաքումներն էջմիածին չեն հասել, նրանց վերաբերող վաւերական որեւէ տեղեկութիւն չկայ, կան միայն իրարամերժ բանաւոր վկայութիւններ: Սակայն թէ՛ 400ը եւ թէ՛ 260ը փոքր քանակներ կամ ծովում կորչելիք ասեղ չեն, ուստի յոյս

¹⁶ 32, Ա., սիւն. 100: Ռուսաստանի ԳԱ Կովկասի (Քիֆլիսի) թանգարանի աշխատակից՝ հնագէտ Սմբատ Տէր-Աւետիսեանի միջոցով որոշ ձեռագրեր տարուել են Քիֆլիս եւ Ս. Պետերբուրգ:

ունենք, որ մի օր այս կնճիռը պարզուելու է: Այսուհանդերձ, ժԹ. դ. ընթացքում Վասպուրականի ձեռագրերը եւ նրանց յիշատակարաններն ունեցել են տարբեր արձանագրումներ, որոնց հիման վրայ կարելի է անվարան ասել, որ ինչքան մեծ է Վասպուրականից փրկուած ձեռագրերի քանակը, նոյնքան աւելի մեծ է նոյն Վասպուրականի կորսուած ձեռագրերի թիւը. գուցէ թէ՛ փրկուածը եղածի միայն քառորդ մասն է: Վասպուրականի կորսուած ձեռագրական արժէքներից բացի, Արեւմտեան Հայաստանի տարածքում նոյն շրջանում ոչնչացուել կամ մեզ չի հասել գիտական գրականութեան եւ առօրեայ մամուլի մէջ համառօտ կամ ընդարձակ նկարագրուած կամ յիշատակուած 9.000ից աւելի ձեռագիր: Նկատենք, որ մեր ձեռագրերի գիտական նկարագրութեան աշխատանքներն սկսուել էին 1890 թ. յետոյ. այսինքն՝ որքա՛ն աւելի ձեռագիր մնացել էր չնկարագրուած եւ չիշատակուած. վիճակագրական որոշ տուեալների վրայ յենուելով հաշուել ենք, որ Արեւմտեան Հայաստանում 1915-1922 թթ. եղեռնին զոհ է գնացել 62.500 հայերէն ձեռագիր¹⁷, պահպանուած եւ մեզ հասած 31 հազարից կրկնակից աւելի:

Նոյն ժամանակ՝ 1916 թ. Մուշի Ս. Կարապետ եւ Ս. Առաքելոց վանքերից ու տարբեր անհատներից էջմիածին տեղափոխուեց 102 հայերէն, 12 արաբատառ ձեռագիր եւ 27 տպագիր գիրք. ձեռագրերից մէկը նշանաւոր Մշոյ ճառընտիրն է՝ հայերէն ամենամեծ ձեռագիրը, որ նախ տարուել է Թիֆլիսի Հայոց ազգագրական ընկերութեան գրադարան, այնտեղից՝ Երեւանի Գրական, ապա՝ Կերպարուեստի թանգարաններ, ի վերջոյ՝ 1938 թ. բերուել է Մատենադարան:

Ծագման տեսանկիւնից այստեղ յիշատակելի է նաեւ Կարնոյ Սանասարեան վարժարանի հաւաքածուն, որ Մատենադարան է մտել Երեւանի Գրական թանգարանից: Էութեամբ ու տեսակով այս խմբին են վերաբերում նաեւ 1915 թ. ի վեր Արեւմտեան Հայաստանի տարբեր շրջաններից մագապուրծ փախած գաղթականներից զանազան մարդկանց ստացած եւ տարբեր տարիների Մատենադարան յանձնած ձեռագրերը, որոնց կազմի ու քանակի ճշտումն ապագայում անելիք գործ է¹⁸:

¹⁷ Գէորգ Տէր-Վարդանեան, «Ձեռագրական մեր կորուստները եւ անելիքները», հետեւեալ գրքում՝ Սուէն Գօլանեան, Յովհաննէս վ. Հիւսեան, Բաբգէն աթոռակից կաթողիկոս Կիլէսէեան, Գէորգ Տէր-Վարդանեան, Եղեռնը եւ մեր ձեռագրերի կորուստներն ու փրկութիւնները, հրատ. պատռ.՝ Գէորգ Տէր-Վարդանեան, Սուրբ էջմիածին, 2015, էջ 9-13:

¹⁸ Արտակ եպս. Սմբատեանցը 1919 թ. մարտի 27-ին Ալեքսանդրապոլից Գէորգ Ե. կաթողիկոսին է ուղարկել Կարսի շրջանի Զրչի գիւղից գաղթած Հայաստան եւ Մաքո Թաթոսեանցներից ստացած երկու ձեռագիր (Վաւերագրեր հայ եկեղեցու պատմութեան, Գիւրգ Գ.՝ Արտակ եպիսկոպոս Սմբատեանց (Տառչեցի)... կազմեց Սանգրո Բեհբուզեան, Երեւան, Անահիտ, 1997, էջ 161). սրանք, իր թուարկած յատկանիշների համեմատ, Մատենադարանի ներկայիս 5914 եւ 6018 ձեռագրերն են, սակայն, Եգանեանի ցանկերում (ՅԶ, Ա., սիւմ. 114) բնորոշուել են որպէս՝ «Վան, պատկանելութիւնն անորոշ»: Այս եւ նման այլ փաստերը ցոյց են տալիս, որ

Տարբեր աղբիւրներից 1920 թ. Մատենադարանում գոյացել է 163 միաւորից բաղկացած մի փոքր հաւաքածու. այս թուի զգալի մասը՝ 101 ձեռագիր ստացուել է յայտնի Խաչիկ վ. Դադեանից:

Այս ամէնով, ի տարբերութիւն 1922 թ. ապրիլի սկզբին Մոսկուայից վերադարձուած բուն հաւաքածուի (4660 հայերէն եւ 232 արաբատառ ձեռագիր), 1921 թ. սկզբին էջմիածնում գոյացել էր մի «նոր հաւաքածու», որի մէջ կար 1634 հայերէն, 4 արաբատառ ձեռագիր:

Ե. ՊԵՏԱԿԱՆԱՅՈՒԱԾ ՄԱՏԵՆԱԳԱՐԱՆԻ ՍԿՋԲՆԱԿԱՆ ՇՐՋԱՆԻ ՀԱՄԱԼՐՈՒՄՆԵՐԸ. 1922-1940 ԹԹ.

Սա ժողովումն էր խորհրդայնացած Ռուսաստանի (Մոսկուա, նոր Նախիջեւան, Թիֆլիս եւ այլն), ապա՝ Հայաստանի տարածքի հայկական վանական, եկեղեցական, ուսումնական եւ այլ հաստատութիւններին, հասարակական ու պետական կազմակերպութիւններին պատկանած ձեռագրերի: Հայաստանի կառավարութեան 1939 թ. յուլիսի 15ի Հ^մ 5320 հրամանագրով բոլոր քաղաքների եւ շրջանների իշխանութիւնները պարտաւոր էին իրենց ունեցած ձեռագրերն ու հնութիւնները հաւաքել եւ յանձնել Մատենադարանին եւ Պատմութեան թանգարանին: Այս շրջանը եզրափակուեց Հայաստանի նոյն կառավարութեան 1940 թ. յուլիսի 27ի Հ^մ 31 որոշման 9րդ կէտով, որ կայացրեց Հայաստանի տարածքի բոլոր տեսակի հին ձեռագրերը պարտադիր կարգով Պետական ձեռագրատուն-մատենադարան յանձնելու վճիռ, որի ուժով էլ պետական բոլոր հիմնարկների (նաեւ Գրական թանգարանի) հարուստ հաւաքածուները մէկտեղուեցին 1939 թ. էջմիածնից Երեւան տեղափոխուած Մատենադարանում:

1922-1925 թթ. Մատենադարանը համալրուել է 234 հայերէն ձեռագրով. զանազան անհատներից ստացուած առանձին միաւորներից բացի, սրանց մեծ մասը հաւաքուել էր Երեւանի եւ Կոնստանդնուպոլիսի եկեղեցիներից, մի զգալի քանակ էլ երեւի 1919 թ. Ազոուլիսի Թովմա առաքելի վանքից Թաւրիզ տարուածներն էին, որոնք 1922 թ. բերուել են էջմիածին: Այսպիսով, 1925 թ. Մատենադարանն ունէր 6790 ձեռագիր, որից 6528ը՝ հայերէն, 262ը՝ արաբատառ:

Այս շրջանի սկզբում էջմիածնի միաբանները (առանձնապէս Մեսրոպ Մագիստրոս Տէր-Մովսիսեան եւ Գարեգին Յովսէփեան արքեպիսկոպոսները) պետականացուած Մատենադարանի նշանակուած պաշտօնեաներին հաւասար եւ նրանց հետ գործակցելով, մասնակցում էին ձեռագրերի ժողովմանը: Սակայն

1915-1940ական թուականների ստացումների նախկին պատկանելութեան ճշգրիտ պատկերը հնարաւոր է ստանալ հսկայական դիւանական նիւթի ուսումնասիրմամբ: Իսկ սա նշանակում է, որ մեր ձեռագրերի ծագումները ճշգրտելու նպատակով շատ ուշադիր պէտք է կարգաւ առաջին հերթին այս՝ «Վաւերագրեր հայ եկեղեցու պատմութեան» մատենաշարի առկա 25 եւ ապագայում լոյս տեսնելիք բոլոր հատորները:

ցաւով պէտք է արձանագրենք, որ հետագայում աշխատանքներն ընթանում էին խորհրդային իրաւակարգի հակակրօնական քաղաքականութեան՝ վանքերի եւ եկեղեցիների փակման, եկեղեցականների ու մտաւորականների նկատմամբ բռնութիւնների լայն ծաւալման պայմաններում. յատկապէս գիւղական շատ քահանաների պատկանած ձեռագիր ու հնատիպ գրքերի մեծ ու մանր բազմաթիւ հաւաքածուներ նշանաւոր 1930ական թուականներին փչացուել են (վառուել, հողի մէջ թաղուել՝ փտել եւ այլն) իրենց տէրերի վախի ու սարսափի կամ նրանց ձերբակալողների տգիտութեան պատճառներով: Հայաստանի տարբեր գիւղերում Մատենադարանի գիտաշխատողները տարբեր տարիների արձանագրել են այս իրողութիւնը հաստատող բազմաթիւ ընտանեկան յիշողութիւնաւանդութիւններ:

1925-1931 թթ. Հայաստանի եւ գրկից հանրապետութիւնների զանազան շրջանների հայկական վանքերից ու եկեղեցիներից եւ մասնաւոր մարդկանցից գնումների եւ նուիրատուութիւնների ձեւով հաւաքուել է 200 ձեռագիր. իսկ 1924-1936 թթ. Մատենադարանը համալրուել է 455 ձեռագրով, որոնցից 216ը ստացուել է Մոսկուայի Լազարեան ձեմարանից, 33ը՝ Էջմիածնի եկեղեցական թանգարանից, 21ը՝ Ախալցխայի թանգարանից, 38ը՝ Գրիգոր Խալաթեանից, 28ը՝ Իւզաբեր Սերոբեան-Ինճիկեանից, 14ը՝ Ստեփան Լիսիցեանից եւ այլ հաստատութիւններից ու անհատներից:

1937-1940 թթ. 688 ձեռագիր է հաւաքուել Հայաստանի շրջաններից եւ Վրաստանի հայաբնակ կենտրոն Ջաւախքից՝ Ախալցխայից (87 միւտր): Ըստ այսմ՝ 1940 թ. Մատենադարանի միայն հայերէն ամբողջական ձեռագրերի քանակը 7793 էր: Սրանց մէջ էին՝ Հնութիւնների պահպանութեան կոմիտէից ստացուած 58 միւտրը, Պետական համալսարանի գրադարանից՝ 39 միւտրը, Երեւանից՝ 37, Մսեր եւ Լեւոն Մսերեաններից՝ 25 միւտր, Աշխարհբէկ Քալանթարից՝ 13 ձեռագիր:

Մատենադարանին զուգահեռ, ձեռագրեր էին հաւաքուում նաեւ 1922 թ. երեւանում հիմնադրուած Գրական թանգարանում, որտեղ 1938 թ. արդէն կար 1298 ձեռագիր, որ կառավարութեան որոշումով նոյն տարուայ սեպտեմբերին յանձնուեց Մատենադարանին: Առանձին կամ փոքրաքանակ միւտրները չհաշուած, այդ թիւը հիմնականում գոյացել էր հետեւեալ աղբիւրներից՝

Ախալցխայի Ս. Փրկիչ եկեղեցուց՝ 40.

Երեւան, Ամերկոմից (Մերձաւոր Արեւելքում ամերիկեան օգնութեան կոմիտէ)՝ 76.

Երեւան, Անդրպետառից (Անդրկովկասի պետական առեւտրական կազմակերպութիւն)՝ 17.

Երեւան, Լուսաւորութեան ժողովրդական կոմիսարիատից՝ 19.

Երեւան, Կերպարուեստի թանգարանից՝ 95.

Երեւան, Հանրային գրադարանից՝ 38.

Երեւան, Հնուժիւնների պահպանութեան կոմիտէից՝ 17.

Թիֆլիսի Հայոց ազգագրական ընկերութիւնից՝ 179.

Թիֆլիսի Ներսիսեան դպրոցից՝ 35.

Կարնոյ Սանասարեան վարժարանից՝ 62.

Նոր Բայազէտի եկեղեցիներից՝ 40.

Նոր Նախիջեւանի եկեղեցիներից, Թանգարանից եւ Թեմական դպրոցից՝ 369.

Սեւանայ անապատից՝ 14:

Մեծ քանակներ էին ստացուել նաեւ առանձին երեւելի մտաւորականներից՝ Կարապետ Կոստանեանից՝ 24 ձեռագիր, Յովհաննէս Թումանեանից՝ 39, Ստեփան Կանայեանից՝ 14, եւ այլն:

Այսպիսով, Գրական Թանգարանի հաւաքածուն ստանալուց յետոյ՝ 1940 թուականին Մատենադարանն ունէր 9382 ձեռագիր, որից Հայերէն 9070 եւ Ժապաւինաձեւ 22 հմայիլ, Արաբատառ 304, Այլալեզու 7:

2. 1941-1962 ԹԹ. ԺՈՂՈՎՈՒՄ ԵՒ ԶԵՌԱԳՐԱԿԱՆ ՏՆՏԵՍՈՒԹԵԱՆ ԿԱՐԳԱՒՈՐՈՒՄ

Այս նոյն ժամանակ Երեւանում ստեղծուել եւ գործում էին գիտական եւ ուսումնական հաստատութիւններ. էջմիածնում լինելու պատճառով Մատենադարանը դուրս էր մնում այդ հիմնարկների գործունէութեան շրջանակից, ուստի Հայաստանի կառավարութեան 1939 թ. օգոստոսի 1ի որոշումով սկսուեց եւ նոյն տարուայ դեկտեմբերի 27ին աւարտուեց Մատենադարանի տեղափոխումը Երեւան: Այստեղ այն զբաղեցրեց Հանրային գրադարանի համար նոր կառուցուած շէնքի մի մասը, միաժամանակ՝ սկսուեց Մատենադարանի համար յատուկ շէնքի նախագծումը, որի կառուցումը յետաձգուեց սկսուած պատերազմի պատճառով: Յիշենք, որ 1941-1962 թուականներն այլ հիմնարկներից փոխանցումով ստացումների, սեփական ձեռագրական եւ դիւանական հաւաքածուների կանոնաւորման եւ մէկից միւսը տեղափոխելու, գնումների ու նուիրատուութիւնների եղանակով համալրման շրջան էին: Ստացման աղբիւրներն այս տարիներին աշխարհագրական առումով Խորհրդային Միութեան, երբեմն էլ՝ Արեւելեան Եւրոպայի ընկերվարականացուած երկրների տարածքներն էին: Ճիշտ է, այս շրջանում, առանձնապէս 1945-1946, 1948, 1955-1956, 1958-1962 թթ. արձանագրուել են ստացումներ նաեւ Բուէնոս-Այրէսից, Հալէպից, Հնդկաստանից, Մարսէլից, Բէրլինից, Պոլսից, ԱՄՆ-ից (Սան-Ֆրանցիսկո, Ֆիլադելֆիա, Տուքսոն), Փարիզից եւ այլ վայրերից, սակայն սա դեռեւս համատարած երեւոյթ չէր. երկրորդ համաշխարհային պատերազմին յաջորդած՝ սփիւռքահայերի ներգաղթով պայմանաւորուող առանձին փաստեր էին, որ արդիւնք էին հիմնականում հայ մշակոյթի անհատ նուիրեալների կամ Մատենադարանի՝ արտասահմանում ապ-

րող բարեկամների ջանքերի: Յիշատակման արժանի են առանձնապէս հալէ-պաքնակ դոկտոր Յարութիւն Տէր-Ղազարեանը եւ Յովսէփ Դէդէեանը, պոլսաբնակ Շաւարշ քհյ. Պալլմեանը, ի վերջոյ՝ բանասէրներ Արշակ Զօպանեանը եւ Թորոս Ազատեանը, որոնց պատկանած ձեռագրերն իրենց դիւան-թողօնների հետ Հայաստան եւ Մատենադարան են հասել ըստ իրենց կտակների:

Քսաներկու տարուայ ընթացքում ստացուած ձեռագրերի քանակն այս է. Հայերէն ձեռագիր՝ 1102, ժապարհնաձեւ հայերէն հմայիլ՝ 168, Արաբատառ ձեռագիր՝ 530, Այլալեզու ձեռագիր՝ 77. ամբողջը՝ 1877 միաւոր:

1941-1962 թթ. ընթացքում ըստ տարիների ստացուած Հայերէն ձեռագրերի թուաքանակներն ինքնին պերճախօս են. 35, 26, 1, 125, 10, 24, 12, 24, 30, 68, 23, 40, 35, 58, 36, 101, 22, 85, 83, 99, 94, 71, ամենաշատ ստացումներ եղել են 1944ին եւ 1956ին՝ 125 եւ 101, աղքատիկ էր 1943ը՝ 1 միաւոր: Հայերէն 1102 ձեռագրից նուէր ստացուածները 339 էին, գնուած՝ 396, Պատառիկների հաւաքածուից՝ 184, Հմայիլների հաւաքածուից՝ 2, Այլալեզու հաւաքածուից՝ 1, Արխիւային բաժնից՝ 74, Տպագիր բաժնից՝ 6, այլ հիմնարկներից փոխանցուած՝ 100: Գնուած ձեռագրերի քանակի մեծութիւնը (396) առաջին հերթին վկայում է, որ պետական մարմինները գիտակցում էին ձեռագրերի արժէքն ու կարեւորութիւնը, ուստի եւ հնարաւորութեան սահմաններում գնման համար դրամական միջոցներ էին յատկացնում: Որքան էլ խորհրդային կարգերը քննադատուէն, Հայաստանի խորհրդային իշխանութիւնները Մատենադարանի նկատմամբ միշտ բարեհաճ եւ հոգատար վերաբերմունք են ունեցել. երկրորդ համաշխարհային պատերազմի ծանր տարիներին անգամ Մատենադարանը պետութեան յատկացրած միջոցներով ձեռագրեր է գնել խորհրդային Միութեան գրեթէ ամբողջ տարածքից՝ Այսրկովկասից, Միջին Ասիայից, Մոսկուայից ու Պետերբուրգից:

Այս տարիներին եւս եղել են մեծաքանակ ձեռքբերում-նուիրատուութիւններ. յիշենք մի քանիսը. Թորոս Ազատեան, Պոլիս՝ 94, Գրական թանգարան, Երեւան՝ 107, Հանրային գրադարան, Երեւան՝ 62, Պետական համալսարան, Երեւան՝ 19, Աշոտ Յովհաննիսեան, Երեւան՝ 14, Լազարեան ճեմարան, Մոսկուա՝ 15:

Այսպիսով, 1962 թ. վերջին Մատենադարանի միայն Հայերէն ամբողջական ձեռագրերի քանակը 10171 էր:

Է. ՀԱՄԱԼՐՄԱՆ ՀԱՄԱՀԱՅՎԱԿԱՆ

ԿԱՄ ԱՇԵԱՐՀԱՍՓԻՒՌ ԸՆԴԳՐԿՄԱՆ ՇՐՋԱՆ. 1963-1992 թթ.

Այս տարիներին հայերէն ձեռագրերի ստացման աղբիւրների աշխարհագրութիւնը միանգամից ընդարձակուել է եւ ընդգրկել հայաբնակ ամբողջ աշխարհը. ԱՄՆ (Նիւ Եօրք, Չիկագո, Սանգր, Արլինգտոն եւ Ֆրեզնո), Բուլղարիա (Սոֆիա, Ռուսէ, Վառնա եւ Պլովդիւ), Իրան (Թեհրան եւ Աբադան, Փերիայի հայ-

կական գիւղեր), Անգլիա (Մանչեստր), Իտալիա (Վենետիկ), Պոլիս, Ռուսիա (Բուխարեստ), Ֆրանսիա (Փարիզ, Լիոն), Ավստրիա (Վիեննա), Սիրիա (Հալէպ):

Գրեթէ նոյն պատկերն առկայ է նաեւ Հայաստանի միւս մեծ թանգարաններում. Հայոց պատմութեան նորագոյն շրջանի ապագայ պատմաբանները պատմական լայն հէնքի վրայ մի օր անպայման քննելու են այս երեւոյթը պայմանաւորող պատճառները (խրուչուկեան ձնհալ, տեւական խաղաղութիւն, Հայաստանի տնտեսութեան զարգացում, Խորհրդային Միութեան եւ Հայաստանի հուսալիութիւն): Մեր համոզմամբ կարելոր գործօններից մէկը Սփիւռքում կատարուած սերնդափոխութիւնն էր. եղեռնից փրկուած եւ իրենց հետ նաեւ ձեռագրեր ու թանգարանային այլ արժէքներ փրկած մարդիկ, մտահոգուելով իրենց յիշատակ-մասունքների ապագայի նկատմամբ, այդ արժէքների ապահով պահպանութեան լաւագոյն լուծումը համարում էին Հայաստանի թանգարաններին նուիրելը: Արեւմտեան Հայաստանից Մերձաւոր Արեւելք, Եւրոպա ու ԱՄՆ տարուած բաւական շատ ձեռագրեր նուէր ստացան թէ՛ Մատենադարանը եւ թէ՛ Մայր Աթոռ Ս. Էջմիածնի ձեռագրական նոր հաւաքածուն:

Այսպիսով, 1963-1992 թթ. երեսնամեակի ընթացքում Մատենադարանի հայերէն ձեռագրերի հիմնական հաւաքածուն համալրուել է 857 միւտորով, որոնցից 197ը գնուել են տարբեր մարդկանցից, իսկ 660ի մեծագոյն մասը նուէրներ են սփիւռքահայ տարբեր հաստատութիւններից, աւելի շատ՝ անհատ մարդկանցից (շատ փոքր քանակը ներքին վերադասաւորում-փոխանցումներ են): Ամենաարգասաբերը եղել է 1973-ը՝ 75 միւտոր, աղքատիկ են եղել 1990 եւ 1991 երկրի համար ծանր ու անհաստատ տարիները՝ 3 եւ 5 միւտոր, բայց, բարեբախտաբար, նոր ձեռագիր չբերած տարի չի եղել:

Ը. ՆԵՐԿԱՅԻՄ՝ ՀԱՅԱՍՏԱՆԻ ԱՆԿԱՆՈՒԹԵԱՆ ՇՐՋԱՆԸ. 1993-2022 ԹԹ.

Մեր ժամանակներում թէ՛ անհատ մարդկանց եւ թէ՛ տարբեր հաստատութիւնների պատկանող ձեռագրերը մեծ մասամբ ծիսական բովանդակութիւն ունեն, բայց, հակառակ դրան, Մատենադարանի վերջին երեսնամեակի համալրումների մեծ մասը գիտական բովանդակութիւն ունի, իսկ կեանքի համար դժուար եւ նիւթական առումով աննպաստ 1993-1994 եւ 1996-1997 թթ. ստացումներն առանձնապէս արժէքաւոր միւտորներ են, որովհետեւ սրանք տոհմական նուիրական սնդուկներից հանուել են դժուար կեանքի թելադրանքով:

1993-2022 թթ. Հայերէն ձեռագրերի հիմնական հաւաքածուն համալրուել է 349 միւտորով (2^{րբ} 11025-11363). նոյն երեսնամեակի բոլոր ստացումների ընդհանուր քանակը 877 է, որից 265ը գնուած է, 45ը՝ փոխանցուած, մնացեալ 567ը նուէր է ստացուել: Մեր ապրած դժուար տարիների տխուր պատկերի հէնքի վրայ վերջին թիւը միայն ուրախացնող է եւ գուցէ թէ՛ լաւագոյն ապագայի նշանակ:

Այս՝ 877 թուից դուրս է 2010-2011 թթ. «Փիւնիկ» բարեգործական հիմնադրամից ստացուած՝ Միհրան Մինասեանին պատկանած 1025 միաւորանոց հաւաքածուն¹⁹ (մեծ մասամբ արաբատառ ձեռագրեր եւ պատառիկներ), որի հետ միասին վերջին երեսնամեակի մեր համալրումների քանակը 1902 է (877+ 1025= 1902):

Այս տասնամեակների նշանակալի եւ յիշատակելի ստացումներն են՝

2003 թ. նորշուղայեցի յայտնի բանասէր Լեւոն Մինասեանից՝ 49 միաւոր հայերէն հին եւ նոր ձեռագրեր, պատառիկներ ու պարսկերէն հմայիլներ (10 միաւոր):

2008 թ. դամասկոսաբնակ Գրիգոր Գէորգի Բարսեղեանից՝ արաբերէն 17 ձեռագիր եւ պատառիկ, որոնցով նրա նուիրած ձեռագրերի քանակը դարձել է 110:

2010-2011 թթ. Սուրէն Բայրամեանը (Կահիրէ) նուիրել է հայերէն 18 ձեռագիր:

2015 թ. Գրականութեան եւ արուեստների թանգարանից ստացել ենք պոլսեցի բանասէր Թորոս Ազատեանի հաւաքածուի մաս՝ հայերէն հին եւ նոր 60 ձեռագիր:

2018 թ. Բէյրութի Նշան Փալանճեան ճեմարանից ստացել ենք հայերէն հին 26 եւ նոր 2 ձեռագիր:

2019 եւ 2022 թթ. Վրէժ (Ներսէս աւագ քոյ) Ներսէսեանից ստացել ենք հայերէն նոր, այլալեզու եւ արաբատառ 26 ձեռագիր:

Ի վերջոյ, Մատենադարանում համապատասխան (հիմնականում՝ Հայերէն հիմնական եւ Արաբատառ) հաւաքածուների ընդհանուր համարաշարի մէջ արձանագրուած են, բայց միաժամանակ առանձին անձնական հաւաքածուներ են համարուում՝

1. «Յարութիւն Հազարեան հաւաքածու», Նիւ Եորքից ստացուած 1963-1979 թթ. – 390 ձեռագիր:

2. «Ռաֆայէլ Մարկոսեան հաւաքածու». Փարիզում կտակուած 1925 թ., ստացուած՝ 1968 թ. – բացառիկ արժէքի 37 ձեռագիր:

3. «Արամ եւ Զարուհի Սալաթեան հաւաքածու». Դամասկոսից ստացուած 1967-1994 թթ. – 238 ձեռագիր²⁰:

ԶԵՌԱԳՐԱԿԱՆ ՄԻՒՍ ՀԱԽԱՔԱԾՈՒՆԵՐԸ

ՀԱՅԵՐԷՆ ՊԱՏԱՌԻԿՆԵՐԻ ՀԱԽԱՔԱԾՈՒՆ. 1-2245 միաւոր. գոյացել է հիմնականում 1915-1916 թթ. Վասպուրականից եւ Տարօսից բերուած ձեռագրերի մէջ

¹⁹ Նոյն Մ. Մինասեանից 2010 թ. ստացուել է հայերէն եւ արաբերէն 27 ձեռագիր ու պատառիկ:

²⁰ Հաւաքածուն ծնողների յիշատակին նուիրել է իրենց որդի Վարուժան Սալաթեանը:

առկայ հատակոտորներից, այնուհետեւ 1930-1936 թթ. ձեռագրեր հաւաքելու ընթացքում հանդիպած եւ Մատենադարան բերուած առանձին ձեռագիր թերթերից կամ թերթախմբերից: Շատ պատառիկներ դուրս են բերուել ամբողջական ձեռագրերից, որոնց մէջ նրանք յայտնուած են եղել պատահաբար, կրկին ամբողջական ձեռագրերից անշատուել են շատ ուրիշ միաւորներ, որոնք նրանց մէջ կարուած են եղել որպէս պատառիկ-պահպանակներ: Բազմաթիւ պատառիկներ էլ ձեռք են բերուել ձեռագրերի նման՝ նուիրատուութիւնների եւ գնումների ձեւով: Այս հաւաքածուն շարունակելու է աճել. պէտք է նկատի ունենանք, որ սրանց մէջ կան շատ արժէքաւոր միաւորներ: Ըստ այս կարեւորութեան՝ ներկայումս մեր ձեռագրերի Մայր ցուցակին զուգահեռ Հայերէն պատառիկները նկարագրուած են առանձին հատոր(ներ)ով, որոնք հետագայում մեզ մատուցելու են յատկապէս բնագրագիտական բնոյթի շատ արժէքաւոր նիւթեր, որովհետեւ շատ պատառիկներ շատ աւելի հին են, քան մեր հնագոյն ձեռագրերը:

ՀԱՅԵՐԷՆ ԺԱՊԱԻՆԱԶԵԻ ՀՄԱՅԻԼՆԵՐԻ ՀԱԽԱՔԱԾՈՒՆ. 1-561 միաւոր. աւելի ճշգրիտ բնորոշմամբ սրանք կոչուած են «Պահպանութեան գիր»։ այսինքն՝ հմայիլն աղօթք-աղերսների ժողովածու է, որ մարդիկ, առանձնապէս ճանապարհորդները, կրում էին իրենց վրայ եւ զանազան պատահարների նկատմամբ աւելի ապահով էին զգում: 1895-1937 թթ. ընթացքում 78 միաւոր հմայիլ գրանցուած եւ պահպանուելիս են եղել հայերէն հիմնական՝ գրքածեւ ձեռագրերի շարքում, 1938 թ. իրաւացիօրէն աւելի յարմար եղանակ է համարուել սրանք առանձին շարքով պահպանելը, ըստ այդմ՝ կազմաւորուել է այս հաւաքածուն: Սրանք չար պատահարներ եւ հիւանդութիւններ կանխարգելող միջոց են համարուել, ուստի եւ շատ են գրուել, եւ մարդկանց ձեռքին որպէս անձնական սեփականութիւն սրանցից շատ կան, այս իսկ պատճառով գնումների եւ նուիրատուութիւնների ձեւով մեր հաւաքածուն տարեցտարի շատ արագ աճել է. աւելի առարկայօրէն պատկերենք. 1962 թ. այստեղ կար 270 միաւոր, 1974 թ.՝ 370, իսկ այժմ՝ 561: Հին՝ պապիրուսէ գալարածեւ գրքերի վերապրուկ լինելով, սրանք շատ արժէքաւոր են թէ՛ բնագրական եւ թէ՛ գեղարուեստական յարդարանքի (մանրանկարչութեան) տեսակէտներից, ուստի սրանց մանրամասն նկարագրութեան ստուար հատորը եւս հրատարակութեան է պատրաստուած մեր Մայր ցուցակին զուգահեռ:

ՀԱՅԵՐԷՆ ՆՈՐ ԶԵՌԱԳՐԵՐԻ ՀԱԽԱՔԱԾՈՒՆ. 1-490. ստեղծուել է 1960 թ.՝ որպէս ժամանակաւոր լուծում՝ նախ գրանցելու, ապա վերագրանցելու համար մեծ մասամբ ժԹ. դարի երկրորդ կէսին կամ Ի. դարի սկզբներին գրուած այն ձեռագրերի, որոնց պարունակած նիւթը վերաբերում է հին կամ միջնադարեան ժամանակներին (ասենք՝ ժ. դարի մատենագրի երկի ժԹ. դ. վերջին գրուած օրինակ): Բայց ձեռագրերը տարեցտարի աւելացան, ի մի հաւաքուեցին նշուած ժամանակի եւ տեսակի բազմաթիւ արժէքաւոր միաւորներ, ուստի որոշուեց շտար-

րալուծել արդէն շուրջ հինգ հարիւր միաւոր ամփոփող այս արժէքաւոր հաւաքածուն:

ԱՆՏԻՊ ՁԵՌԱԳՐԱՅՈՒՅԱԿՆԵՐԻ ՀԱԽՔԱՄՈՒՆ. 1-182. այստեղ ժողովուած են Մատենադարանի ձեռագրերի տարբեր մաս-հաւաքածուների հին ցուցակներ, որոշ դէպքերում նաեւ արդէն տպագրուած ձեռագրացուցակների հիմքերը²¹, բայց կան չպահպանուած ձեռագրերի ու ձեռագրախմբերի նկարագրութիւններ, որոնք մօտ ապագայում պէտք է պատրաստուեն եւ հրատարակուեն, որպէսզի դրանով գիտական շրջանառութեան մէջ դրուեն կորսուած մեզ չհասած ձեռագրերի պարունակած գոնէ կարեւորագոյն տեղեկութիւնները: Ամենանշանաւորն ու արժէքաւորը Մեսրոպ Մագիստրոս արքեպիսկոպոս Տէր-Մովսիսեանի «Ընդհանուր ցուցակ հայերէն ձեռագրաց» հակայածաւալ գործն է, որի մէջ նկարագրուած են 1930ական թուականների դրութեամբ հեղինակին յայտնի 23.000 հայերէն ձեռագրերը²²: Թէ՛ այս կարեւորագոյնը եւ թէ՛ հաւաքածուիս այլ միաւորներ ապագայ գիտական մշակումների եւ հրապարակումների նիւթ են դառնալու:

ԱՐԱՔԱՏԱՆՈՒ ՁԵՌԱԳՐԵՐԻ ՀԱԽՔԱՄՈՒՆ. 1-2733. Հայերէնին զուգահեռ Մատենադարանում հաւաքուել էին եւ նախորդ դարի սկզբին կար 201 արաբատառ արաբերէն, պարսկերէն եւ թուրքերէն ձեռագիր, փոքր յաւելումներով այս թիւը 1915 թ. դարձել է 218, 1915-1916 թթ. Վասպուրական-Տարօնի հաւաքածուի հետ էջմիածին բերուեց նաեւ արաբատառ 50 ձեռագիր, 1920-1940 թթ. հայերէն ձեռագրերի հետ միասին Մատենադարանում հաւաքուեց նաեւ 193 արաբատառ միաւոր, որոնցով հանդերձ 1940 թ. այդ թիւը դարձաւ 446 (սրա զգալի մասը՝ պարսկերէն շատ արժէքաւոր ձեռագրեր, Մոսկուայի Լազարեան ձեմարանի ժառանգութիւնն է), 1961 թ. վերջին հասաւ 656ի, որին 1962 թ. աւելացաւ եւս 339ը, եւ ընդհանուր թիւը դարձաւ 995: Այս թուի 277ը ստացուել է Մատենադարանին ամենամեծ քանակի՝ 390 ձեռագիր նուիրած մարդուց՝ նիւեորքաբնակ Յարութիւն Հազարեանից: Հետագայ տասնամեակներում հիմնականում Մերձաւոր Արեւելքի երկրներում ապրող սփիւռքահայ մեր բարեկամների նուիրատուութիւններով ձեռագրերի քանակն աճեց եւ հասաւ ներկայ 2733 թուին, որ արդէն իսկապէս պատկառելի հաւաքածու է եւ ընդհանուր արեւելագիտական կարեւորութիւն ունի:

²¹ Այս հաւաքածուի 134րդ միաւորը հիմքն է հետեւեալի՝ *Յուցակ հայերէն ձեռագրաց նոր Զուղայի Ամենափրկիչ վանքի*, հտ. Ա., կազմեց *Սմբատ Տէր-Աւետիսեան*, Վիեննա, 1970, Մխիթարեան տպարան. Ը+926 էջ. նկարագրել է 587 ձեռագիր:

²² Հաւաքածուիս 133րդ համարն է, որի մասին տե՛ս **Գէորգ Տէր-Վարդանեան**, *Մեսրոպ Մագիստրոս արքեպիսկոպոս Տէր-Մովսիսեան. Կենսագործունէութիւնը*, «Ընդհանուր ցուցակ հայերէն ձեռագրաց», *Մատենագիտութիւն*, Երևան, «Մագաղաթ» հրատ., 1999, 180 էջ:

ԱՐԱՔԱՏԱՌ ՊԱՏԱՌԻԿՆԵՐԻ ՀԱԽՔԱԾՈՒՆ. 1-612. Ամբողջական ձեռագրերի հետ եւ նրանց զուգահեռ ստացուել են նաեւ պատառիկներ, որոնց քանակն այժմ (2022 թ. վերջին) հետեւեալն է՝ արաբերէն՝ 534, պարսկերէն՝ 40, թուրքերէն՝ 38. Ընդհանուր քանակը՝ 612:

ԱՐԱՔԱՏԱՌ ՀՄԱՅԻՆԵՐԻ ՀԱԽՔԱԾՈՒՆ. 1-54. Արաբական գրերով ձեռագրերի հետ տարբեր ժամանակներում ստացուել են ժապարհնաձեռ արաբերէն եւ պարսկերէն 54 հմայիլ (վերջին 10ը՝ 2003 թ. նորջուղայեցի յայտնի բանասէր Լեւոն Մինասեանից):

ԱՅԼԱԼԵԶՈՒ ԶԵՌԱԳՐԵՐԻ ՀԱԽՔԱԾՈՒՆ. 1-381. Այս հաւաքածուի մէջ այն ձեռագրերն են, որ հայերէնից կամ արաբատառից տարբեր որեւէ այլ լեզուով են: Սա ստեղծուել է 1938 թ.՝ երբ հնագէտ Աշխարհբէկ Քալանթարը հայերէնների հետ միասին նուիրել է նաեւ այլալեզու հինգ ձեռագիր, որոնց նման այլ միաւորներ ձեռք են բերուել նաեւ հետագայ տարիներին, 1962 թ. վերջին սրանց թիւը դարձել է 90, այսօր՝ 381, որի մէջ նշանակալի է Վիննիցայի պետական արխիւից 1986 թուականի մարտ ամսին եբրայական մագաղաթէ 126 թորայի ստացումը:

ԱՅԼԱԼԵԶՈՒ ՊԱՏԱՌԻԿՆԵՐԻ ՀԱԽՔԱԾՈՒՆ. 152 միաւոր. այս դէպքում եւս ամբողջական ձեռագրերին զուգահեռ ստացուել են շպահապանուած ձեռագրերի մաս-պատառիկներ. ունենք ասորերէն 23, եբրայերէն 9, եթովպերէն 7, լատիներէն 24, ճապոներէն 1, յունարէն 24, սլաւոներէն 4, վրացերէն 57 պատառիկ եւ եգիպտական 3 պապիրուս. ամբողջը միասին՝ 152 միաւոր:

Այսպիսով, 2022 թուականի վերջին Մաշտոցեան Մատենադարանի ձեռագրական հաւաքածուների թուային պատկերը հետեւեալն է՝

Հաւաքածու

1.	Հայերէն ձեռագրերի հիմնական	11363
2.	Հայերէն նոր ձեռագրերի	492
3.	Հայերէն պատառիկների	2245
4.	Հայերէն հմայիլների	561
5.	Անտիպ ձեռագրացուցակների	182
6.	Արաբատառ ձեռագրերի	2733
7.	Արաբատառ պատառիկների	612
8.	Արաբատառ հմայիլների	54
9.	Այլալեզու ձեռագրերի	381
10.	Այլալեզու պատառիկների	152
	Ընդամենը	18775

Այսպիսով Հայերէն հինգ հաւաքածուների առկայ ընդհանուր քանակն է՝

14.843 միաւոր, Արաբատառ եւ Այլալեզու հաւաքածուներինը՝ 3932 միաւոր. բոլորը միասին՝ 18.775:

Հայերէն ձեռագրերի հիմնական հաւաքածուի նիւթապէս առկայ՝ Հ^մ 1-11.363 միաւորների մէջ «ի մի տփի» Չրդ եւ աւելի ձեռագրերի մօտաւոր քանակն է՝ 1818 ձեռագիր, որով հանդերձ՝ ամբողջը լինում է 20.593 միաւոր (18.775+ 1818 = 20.593):

Հայերէն ձեռագրերի հիմնական հաւաքածուի Հ^մ 1-11.363 ձեռագրերի մէջ առկայ պատառիկ-պահպանակների քանակը 2145 է, որի հետ միասին՝ մեր ձեռագրական բոլորը միաւորների ընդհանուր քանակը 22.738 է:

* * *

Ամփոփենք. ԺԹ-ի. դարերի ամբողջ ընթացքում, նաեւ մինչ օրս, Մատենադարանի հետ առնչութիւն ունեցած հոգեւորական եւ աշխարհական շատ անհատներ իրենց ուղղակի կամ անուղղակի գործունէութեամբ էապէս նպաստել են մեր ձեռագրական հաւաքածուների համալրում-հարստացմանը. եւ շատ դէպքերում նրանց անունները չեն արձանագրուել իրենց իսկ ջանքերով ստացուած ձեռագրերին վերաբերող փաստաթղթերում: Ապա՝ շատ յաճախ համալրուած ձեռագրերի քանակը կամ նուիրուած թէ գնուած լինելն առաջնային կարեւորութիւն չունի, աւելին՝ գիտութեան համար կարեւորը ձեռագրի ծագումն է (անցած ուղին), իսկ գնուած կամ նուիրուած լինելը զուտ իրաւա-բարոյական խնդիր է: Կրկին՝ գիտութեան համար ստացուած ձեռագրի ամբողջական կամ մասնական (պատառիկ), հայերէն կամ այլալեզու լինելը յաճախ երկրորդական հարց է: Ապա՝ վերը որպէս նուիրատուութիւն յիշատակուած թուերը եւ նուիրատուների անունները վերաբերում են մեծ մասամբ Հայերէն հիմնական հաւաքածուի ձեռագրերին: Ըստ այսմ՝ մօտ ապագայում առանձին գրքով հրապարակուելու են մեր բոլոր հաւաքածուների բոլոր ձեռագրերի ստացման աղբիւրների մանրամասները, այսինքն՝ նախկին պատկանելութիւնների կամ տէրերի (կազմակերպութիւնների եւ անհատների) անուանացանկերը. եւ աւելին՝ ձեռագրերի ժողովման ուղղութեամբ մեծ երախտիք ունեցած անհատների անուններն ու գործերը:

GEVORG TER-VARDANYAN

THE MANUSCRIPT COLLECTIONS OF MASHTOTS MATENADARAN

Key words: Manuscript, fragment, Etchmiadzin, collection, Armenian, Arabic script, other languages, donators.

As of **late November 2022**, the collection of **complete Armenian manuscripts** of Matenadaran is **11 363 items**. It was formed in eight stages:

1. The “old collection of Etchmiadzin” took shape spontaneously.
2. The purposeful collection of manuscripts during the cultural awakening in the days of Catholicos Gevorg IV of Constantinople (1866–1882) and his successors: the “Gevorgian” collection.
3. The collection of manuscripts from monasteries, churches and individuals in large dioceses under the jurisdiction of the Mother See of Holy Etchmiadzin (Eastern Armenia and elsewhere) during 1893–1915.
4. The saving of collections in Western Armenia, particularly in Vaspurakan and Taron, which was one of the important cultural results of the self-defense of Van (April–May 1915).
5. The enrichment of the collection of the nationalized Matenadaran in 1922–1940.
6. The period of transmissions from other organizations, the systematization of the manuscript and diplomatic collections, their enrichment by transfers, purchases and donations in 1941–1962.
7. The all-Armenian and diasporal period of comings-in: 1965–1991, continued with variable intensity until the disintegration of the Soviet Union and the gaining of independence by Armenia.
8. The period of independence.

Besides complete Armenian manuscripts, Matenadaran also possesses:

1. Fragments of Armenian manuscripts – 2245 items.
2. Armenian amulet scrolls – 561 items.
3. A collection of new Armenian manuscripts (second half of the 19th, early 20th cc.) – 490 items.
4. A collection of unpublished catalogues – 182 items. There are also descriptions of lost manuscripts and collections; the most important among them is the huge work of Mesrop Magistros Ter-Minasyan, the “Comprehensive Catalogue of Armenian Manuscripts,” which describes 23 000 items known to the author in the 1930s.
5. A collection of manuscripts in Arabic script (in the Arabic, Persian and Turkish languages) – 2733 items.
6. Fragments of Arabic-script manuscripts – 612 items.

7. Fragments of Arabic-script amulets (in Arabic and Persian) – 54 items.

8. A collection of manuscripts in other languages (all other scripts besides the Armenian and Arabic) – 381 items.

9. A collection of fragments in other languages – 152 items, folios from Syriac, Hebrew, Ethiopian, Latin, Japanese, Greek, Slavonic, Georgian manuscripts and three Egyptian Papyri.

The manuscript collections as of late November 2022, are the following: the total number of the five Armenian collections is 14 843, and of the other collections, 3 932, altogether, 18 775 items.

The known number of convolutes (two or more manuscripts in one codex) in the main collection of Armenian manuscripts (№№ 1–11 363) is 1818; 18 775+1818 = 20 593 items.

The number of guard-leaves in the main collection of Armenian manuscripts (№№ 1–11 363) is 2145; altogether, Matenadaran houses 22 738 manuscript items.

ГЕВОРГ ТЕР-ВАРДАНЯН

РУКОПИСНЫЕ СОБРАНИЯ МАТЕНАДАРАНА ИМ. МАШТОЦА

Ключевые слова: Рукопись, фрагмент, Эчмиадзин, собрание, армянский, арабское письмо, иноязычные, дарители.

Собрание **полных армянских рукописей** по состоянию на **конец ноября 2022 г.** насчитывает **11 363 единицы**. Оно формировалось в восемь основных этапов.

1. «Старая коллекция Эчмиадзина»: создавалась стихийно.

2. Целенаправленное собирание рукописей в период культурного пробуждения при католикосе Георге IV Константинопольском (1866-1882) и его последователях: собрание «Георгян».

3. Собрание монастырских, церковных и частных коллекций и отдельных рукописей по крупным епархиям, находящимся в юрисдикции Св. Престола в Эчмиадзине (Восточная Армения и др.), 1893-1915 гг.

4. Спасение собраний Западной Армении, особенно Васпуракана и Тарона, что явилось одним из важных культурных результатов известной самообороны Вана (апрель-май 1915 г.).

5. Пополнения коллекции национализированного Матенадарана, 1922-1940 гг.

6. Период передачи из других организаций, систематизации рукописных

и дипломатических коллекций и пополнения за счет передач, покупок и дарений: 1941-1962 гг.

7. Всеармянский или диаспоральный период поступлений – 1965-1991 гг. Продолжался с переменной интенсивностью до распада Советского Союза и обретения Арменией независимости.

8. Период независимости Армении.

В Матенадаране хранятся также:

1. Собрание фрагментов армянских рукописей – 2245 единиц.
2. Собрание армянских свитков-оберегов – 561 единица.
3. Собрание новых армянских рукописей (вторая половина XIX, начало XX века) – 490 единиц.
4. Собрание неопубликованных каталогов, 182 единицы. Имеются и описания несохранившихся рукописей и коллекций. Наиболее значимое из них – гигантский труд архиепископа Месропа Магистроса Тер-Мовсисяна «Общий каталог армянских рукописей», в котором описываются 23 000 единицы, известные автору по состоянию на 1930-е годы.

5. Собрание рукописей арабского письма (на арабском, персидском и турецком) – 2733 единицы.

6. Коллекция арабографических фрагментов – 612 единиц.

7. Коллекция арабографических (на арабском и персидском) оберегов – 54 единицы.

8. Собрание иноязычных рукописей (любого другого письма, кроме армянского или арабского) – 381 единица.

9. Собрание иноязычных фрагментов – 152 единицы (листы из сирийских, еврейских, эфиопских, латинских, японских, греческих, славянских, грузинских рукописей, а также три египетских папируса).

На конец 2022 года рукописные собрания Матенадарана им. Маштоца выглядят следующим образом: общее количество рукописей пяти армянских коллекций составляет 14 843, арабоязычных и иноязычных коллекций – 3 932, итого – 18 775 единиц хранения.

Известное число конволютов (двух и более разных рукописей, сплетенных в один кодекс) в основном собрании армянских рукописей (№№ 1-11 363) – 1818, то есть в целом фонд армянских рукописей содержит 20 593 ед. (18 775+1818).

Число фрагментов на защитных листах в основном собрании армянских рукописей (№№ 1-11 363) составляет 2145, то есть всего в Матенадаране находится 22 738 рукописных единиц хранения.

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ

ՄԱՏԵՆԱԳԻՏՈՒԹՅՈՒՆ

ԳԷՈՐԳ ՏԷՐ-ՎԱՐԴԱՆԵԱՆ

Մաշտոցեան Մատենադարանի ձեռագրական հաւաքածուները
(ժողովման պատմութեան համառօտ ուրուագիծ).....5

ՄԱՐԻՆԵ ՍԱՐԳՍՅԱՆ

Ղազար Ջահկեցու «Գիրք աղօթից»-ի 1742-1744 թթ.
տպագրված տարբերակները32

ՊԱՏՄՈՒԹՅՈՒՆ ԵՎ ԱԶԳԱԳՐՈՒԹՅՈՒՆ

ԿԱՐԵՆ ՄԱԹԵՎՈՍՅԱՆ

Ներսես Շնորհալու ծննդյան թվականն ըստ
իւր եղբորորդի Գրիգորի հիշատակարանի44

ԱՐՄԵՆ ՊԵՏՐՈՍՅԱՆ

Հայոց հնագոյն թաղման ծեսերը
(ըստ ազգածին ավանդության տվյալների).....56

ԶՈՀՐԱԲ ԳԵՎՈՐԳՅԱՆ

Պատեր և պարիսպներ. մասնավորի ու հանրայինի միջև
սահմանները Կիլիկյան Հայաստանի փառաբային միջավայրում.....68

ՀԱՅԿ ՀԱՄԲԱՐՁՈՒՄՅԱՆ

Ինչո՞ւ, ե՞րբ և որքա՞ն են ուսում «Սասնա ծռեր»
էպոսում ու միջնադարյան գրականության մեջ. սնունդն ու ծեսը81

ՍԱՄՎԵԼ ՌԱՄԱԶՅԱՆ

Անի փաղափ կործանման մասին թուրքական
ավանդագրոյցը և դրա հայկական արմատները.....108

ՀԱՅԿԱԶ ԳԵՎՈՐԳՅԱՆ, ՀԵՆՐԻԿ ԽԱԶԱՏՐՅԱՆ

Մարդպետություն գործակալությունը և մարդպետ պաշտոնյան.....129

ԱՇՈՏ ՍԱՐԳՍՅԱՆ

Հայ պատմագրության ուսումնասիրման փաղափական դիտանկյան
ներածական հարցեր.....158

ԲԱՆԱՍԻՐՈՒԹՅՈՒՆ

ՌՈՒՋԱՆ ՊՈՂՈՍՅԱՆ

ԺԳ դարում ընդօրինակված
«Բանի Խմաստասիրաց»-ի շոք տարբեր բնագիր 189

ԱՐՎԵՍ

ՇՈՂԱԿԱԹ ԴԵՎՐԻԿՅԱՆ

Գրիգոր Նարեկացու տեսիլի պատկերագրությունը
(Մանրանկարներից մինչև Մխիթարյան
հայրերի հրատարակությունների փորագրանկարներ) 204

ԼՈՒՍԻՆԵ ԲԱՐՍԵՂՅԱՆ

«Հաղորդությունը» Թորոս սարկավազի և Թորոս Տարոնացու
մանրանկարներում 216

ՀՆԱԳԻՏՈՒԹՅՈՒՆ

ԱՐՄԱՆ ՆԱԼԲԱՆԴՅԱՆ, ԳԻԱՆԱ ՄԻՐԻՋԱՆՅԱՆ

Սանահինի արհայական-իշխանական հանգստարանները
Ջաֆարյանների տապանատան հնագիտական
պեղումների համապատկերում 225

ՄԵՐԻ ՍԱՖԱՐՅԱՆ

Մովեդի վանական համալիրը
(2021-2022 թթ. պեղումների արդյունքները) 235

ՀՐԱՊԱՐԱԿՈՒՄ

ԱՐՏԱԿ ՄԱՂԱՅԱՆ

Արցախի բնակավայրերն ըստ Երուսաղեմի
ս. Հակոբյանց վանքի նվիրակի հաշվետումարի 252

ԳՐԱԵՈՍՈՒԹՅՈՒՆ

ԱՐՈՒՍՅԱԿ ԹԱՄՐԱԶՅԱՆ

Արամ Քերովբեան, *Ջայն Յանապատի. Եկեղեցական
երաժշտության բարեկարգումը ԺԹ. դարու վերջաւորութեան,*
Ակն ընկերակցութիւն, Փարիզ, 2017 271

ՄԱՀԱՆՈՍԱԿԱՆՆԵՐ

Տաթևիկ Մանուկյան, Գեվորգ Տեր-Վարդանյան (1951-2023)	294
Կարեն Մաթևոսյան, Վարդան Գեվրիկյան (1964-2023)	301
Լինա Պիրադովա, Հայդե Բուշնաուզեն (1939-2023)	309
 <i>ԲԱՆԲԵՐ ՄԱՏԵՆԱԴԱՐԱՆԻ հանդեսի հոդվածների</i> ձևավորմանը վերաբերող պահանջներ	311

CONTENTS
BIBLIOGRAPHY**Gevorg Ter-Vardanyan**

The Manuscript Collections of Mashtots Matenadaran 5

Marine Sargsyan

The Versions of the *Prayer Book* by Ghazar Jahkets'i
Printed in 1742–1744 32

HISTORY AND ETHNOGRAPHY**Karen Matevosyan**

The Date of Birth of Catholicos Nersēs Shnorhali
according to the Colophon of his Nephew Grigor 44

Armen Petrosyan

Funeral Rites of Earliest Armenians
(According to Ethnogenic Tradition) 56

Zohrab Gevorgyan

Walls and Fences: Boundaries between the Private
and Public in the Urban Environment of Cilician Armenia 68

Hayk Hambardzumyan

Why, When and How Much They Eat in the Epic
"Sasna Tsrer" and in Medieval Literature? Food and Ritual 81

Samvel Ramazyan

The Turkish Legend about the Destruction of the
City of Ani and its Armenian Roots 108

Haykaz Gevorgyan, Henrik Khachatryan

The Office of Mardpetut'yun and the Mardpet Official 129

Ashot Sargsyan

Introductory Issues Related to the Study of Armenian
Historiography from the Political Aspect 158

PHILOLOGY
Ruzan Poghosyan

- Four Different Copies of “Sayings of Philosophers”
from the 13th Century.....189

ART**Shoghakat Devrikyan**

- Iconography of Grigor Narekats‘i’s Vision
(From Miniatures to Engravings of Mekhitarists’ Publications).....204

Lusine Barseghyan

- Communion of the Apostles in the Miniatures
of T‘oros the Deacon and T‘oros Taronats‘i.....216

ARCHAEOLOGY**Arman Nalbandyan, Diana Mirijanyan**

- Sanahin as a Royal and Princely Cemetery.....225

Meri Safaryan

- The Monastery Complex of Srvegh (Results of excavations 2021–2022).....235

PUBLICATION**Artak Maghalyan**

- The Settlements of Artsakh according to the Donation
Book of the Saint James Monastery of Jerusalem.....252

BOOK REVIEW**Arusiak Tamrazian**

- Aram Kerobian, *A Voice in the Wilderness. Reform of the Church
Music in the Late 19th Century*, Paris, 1917.....271

OBITUARIES

- Tatevik Manukyan**, Gevorg Ter-Vardanyan (1951-2023).....294

- Karen Matevosyan**, Vardan Devrikyan (1964-2023).....301

- Lina Piradova**, Heide Buschhausen (1939-2023).....309

СОДЕРЖАНИЕ

БИБЛИОГРАФИЯ

Геворг Тер-Варданян

Рукописные собрания Матенадарана им. Маштоца..... 5

Марине Саргсян

Версии «Молитвенника» Казара Джахкеци,
напечатанная в 1742-1744 гг. 32

ИСТОРИЯ И ЭТНОГРАФИЯ

Карен Матевосян

Дата рождения католикоса Нерсеса Шнорали согласно
памятной записи его племянника Григора 44

Армен Петросян

Похоронные обряды
древнейших армян (по данным этногонического предания)..... 56

Зограб Геворгян

Стены и заборы: границы
между частным и общественным в городской
среде Киликийской Армении 68

Айк Амбарцумян

Почему, когда и сколько едят в эпосе «Сасунские удалцы»
и в средневековой литературе? Еда и ритуал 81

Самвел Рамазян

Турецкое предание о разрушении города
Ани и его армянские корни 108

Айказ Геворгян, Генрик Хачатрян

Ведомство *мардпетутюн*
и должность *мардпета* 129

Ашот Саргсян

Размышления об изучении армянской
историографии в политическом аспекте 158

ФИЛОЛОГИЯ

Рузан Погосян

Четыре разные рукописи
“Изречений философов” XIII века 189

ИСКУССТВО

Шогакат Деврикан

Иконография видения Григора Нарекаци
(от миниатюр до гравюр изданий Мхитаристов)..... 204

Лусине Барсеган

“Причащение апостолов” в миниатюрах Тороса Дьякона
и Тороса Таронаци..... 216

АРХЕОЛОГИЯ

Арман Налбандян, Диана Мириджанян

Санаин как царская и княжеская усыпальница..... 225

Мери Сафарян

Монастырский комплекс
Срвег (результаты раскопок 2021-2022 гг.)..... 235

ПУБЛИКАЦИЯ

Артак Магальян

Поселения Арцаха согласно книге пожертвований
иерусалимского монастыря свв. Иаковов..... 252

РЕЦЕНЗИЯ

Арусяк Тамразян

Арам Керобян, *Глас в пустыне. Реформа церковной
музыки в конце XIX века*, Париж, 2017..... 271

НЕКРОЛОГИ

Татевик Манукян, Геворг Тер-Варданян (1951-2023)..... 294

Карен Матевосян, Вардан Деврикан (1964-2023)..... 301

Лина Пирадова, Хайде Бушхаузен (1939-2023)..... 309

ԲԱՆԲԵՐ ՄԱՏԵՆԱԴԱՐԱՆԻ

Հատոր 35

BULLETIN OF MATENADARAN

Volume 35

ВЕСТНИК МАТЕНАДАРАНА

Том 35

Համակարգչային ձևավորումը և էջադրումը՝ Անահիտ Խանգադյանի
Շապիկի ձևավորումը՝ Մարտիրոս Տոլմանեանի
Շապիկին՝ Ներսես Շնորհալի, Մանրուսմունֆ (Ղրիմ), 1352 թ., ՄՄ 591
Սրբագրիչ՝ Արմինե Գրիգորյան
Հրատարակչական խմբագիր՝ Հայկ Համբարձումյան

Տպագրված է «ՔՈՓԻ ՓՐԻՆԹ» ՍՊԸ տպարանում

Ք. Երևան, Ներսիսյան 1

Զախսը՝ 70×100 1/16, տպագրական մամուլ՝ 20

տպաֆանակ՝ 150

Մատենադարան

Մեսրոպ Մաշտոցի անվան հին ձեռագրերի ինստիտուտի

հրատարակչական բաժին, ֆ. Երևան, Մաշտոցի պող. 53, հեռ. (010) 513033

publishing.matenadaran@gmail.com

Ամսագրի քվային տարբերակը՝

banber.matenadaran.am/download-category/բանբեր-մատենադարանի/